№ 45 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 15

1905

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 15 № 45

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեշեդի խռովութիւնները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական հաղորդագրութիւն. Մամուլ. Հնդկաստանի մուսուլմանների հեռագիրները. Բագուի աղէտի զոհերի օգտին. Թատրօն և երաժշտութիւն. Նամակ Ղուբայից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակներ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԵՇԵԴԻ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մենք ունինք տեղեկութիւններ Մեշեդի յուզմունքների բնաւորութեան մասին և յայտնեցինք, որ նրանք արտայայտվում են առ այժմ կողոպուտներով և տներ քանդելով։

Տեղական իշխանութիւնը շուտ չը կարողացաւ զսպել ամբոխը։ Եւ այդ բանը մեծ անհանգստութիւն պատճառեց եւրոպացիներին։ Երկիւղ կար, որ կը սկսվեն կոտորածներ և կողոպուտներին կաւելանան մարդկային զոհեր։

Պարսից կենտրոնական կառավարութիւնը, տեղեկանալով Մեշեդի դէպքերի մասին, անմիջապէս կարգադրել է, որ ձեռք առնվեն բոլոր տեղական միջոցները սաստելու ամբոխը։ Թէև ուշ, բայց իշխանութեանը աջողվեց վերականգնել խաղաղութիւնը և առաջն առնել կոտորածների։ Հեռագրական գործակալութիւնը հաղորդեց, որ անկարգութիւնները դադարել են։

Մեր ձեռք բերած տեղեկութիւններից երևում է, որ թէև ամբոխը զսպվել է, բայց քրիստոնեաները վստահութիւն չունեն ամբոխի վրա և վախենում են գաղտնային կրքերի նոր, անսպասելի բռնկումներից։ Սարսափի զգացմունքը շարունակվում է։

Մեր տեղեկութիւններին կարող ենք աւելացնել և հետևեալը։ «Նադէժդա» ընկերութեան Թիֆլիսի բաժնի կառավարիչը դիմել էր Մեշեդ ընկերութեան գործակալին մի քանի հարցերով՝ թէ ինչ է եղել անկարգութիւնների պատճառը, ովքեր են փնասվածները և ինչ միջոցներ են ձեռք առնված կարգը վերականգնելու համար։ Այդ հեռագրին իբրև պատասխան ստացվել է հետևեալը. «Խռովութիւնների առիթ ծառայել են այն տարածված լուրերը, որ իբր թէ մի հայ առևանգել է մի մահմեդական կնոջ. իսկ պատճառը ազգաբնակութեան վաղուցվայ դժգոհութիւնն է։ Ոչ ոք ֆիզիքապէս չէ փնասված։ Կողոպտված են հայերի տները և խանութները, փոխադրական գրասենեակների պահեստը և բիւրօն։ Նիւթական փնասը հաշւում են մօտ 150,000 րուբլի։ Կարգը վերականգնված է։ Շրջում են պահակախմբեր։ Եւրօպացիների տները պահպանվում են։ Հայերը ապաստանվել են ռուսաց հիւպատոսարանի շէնութեան մէջ. նրանց դէմ նկատվում է գրգռված տրամադրութիւն»։

Պարսկաստանի և ուրիշ տեղերում նըկատվում է անվստահ վերաբերմունք մահմեդականների կողմից, բայց տեղական իշխանութիւնները մինչև այժմ կարողացել են զսպել ամբոխը։ Ռաշտի գըլխաւոր կառավարիչը յայտնել է ռուսաց հիւպատոսին, որ նա իր կողմից ձեռք է առել բոլոր միջոցները և յոյս ունի, որ ոչ մի խլրտում առաջ չի գայ, բայց նա մի փոքր կասկած ունի ռուսահպատակ մահմեդականներից, որոնք գտնվում են Ռաշտում։

Հեռագրական գործակալութիւնը լուր է բերում, որ անհանգիստ տրամադրութեան նշաններ են երևում մահմեդական ազգաբնակութեան մէջ նաև Ուրմիայի կողմերում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Кавказъ» լրագրի մարտի 13-ի համարում տպված է.

«Փետրվարի 28-ին, ցերեկվայ ժամը 4-ի մօտ, Խէցարի և Վարձիա գիւղերի բնակիչները (Շորապանի գաւառ) 350 հոգու չափ, խումբ կազմած, «Ուրա» կանչելով և «այժմ ժամանակը չէ, այժմ ազատութիւն, միութիւն և եղբայրութիւն է, թող կորչի հին կառավարութիւնը» և այլ այդպիսի բաներ բղաւելով, նախ մտան Կիցխի երկդասեան դպրոցը և ծառային դպրոցից բշելով, կոտրեցին դռները, լուսամուտները, պահարանները, սեղան-աթոռները, նոյնպէս և պատառոտեցին Թագաւոր Կայսրի պատկերը և այնտեղ եղած բոլոր գրքերն ու դօկումէնտները։ Դպրոցի հետ գործը վերջացնելով, ամբոխը գնաց Կիցխի գիւղական դիւանատունը և այնտեղ եղած ամեն ինչը ոչնչացրեց, իսկ գրքերն ու թղթերը դուրս հանեց և կտոր-կտոր արեց։ Ամբոխն այնտեղից դիմեց Վարձիա գիւղը, Իվան Կիպիանի ազնուական տունը, ուր բնակվում էր Կրէտէի յունական մենաստանի կալուածի կառավարիչ Կիպէէ վարդապետ Սամուէլը, որը տեսնելով ամբոխը, կարողացաւ փախչել։ Ամբոխը մտաւ տունը, կոտրատեց դռները և լուսամուտները և տանը եղած բոլոր իրերը. դուրս տարաւ այնտեղից երկու մեծ արկղներ, կոտրատեց և նրանց միջի գրքերն ու դօկումէնտները պատառոտեց, թափթփեց ու ցըրվեց։ Այդ ժամանակ, Սամուէլ վարդապետի ասելով, կողոպտել են վրաց Թագաւորների հրովարտակները, որոնց հիման վրա մենաստանը տիրում էր այդ անշարժ կալուածներին։ Նոյն օրը երեկոյեան հաւանօրէն ամբոխի մի մասը, կոտրատելով Կիպիանու տան լուսամուտները (Կիպիանին բացակայ է իր ընտանիքով) ներս մտաւ և սպառնալով սպանել տան եղած անձերին, կոտրեց կոմօդը, ոչնչացրեց բոլոր թղթերը, կողոպտեց որսի երկու հրացան և մի խանչէր։ Յետոյ ամբոխն առաջարկեց Կիպիանու տունը շինող 10 ատաղձագործ վարպետներին աշխատանքը դադարեցնել։

«Դուշէթի գաւառի Ջալիսի, Մճադիս Ջվարի և Մուխրանի գիւղերի բնակիչները, Մուխրանի ուդէլների կալուածում, մարտի 1-ից մինչև 7-ը ինքնակամ կերպով կոտրատեցին ծառերը և տարան։ Մարտի 5-ին Մուխրանի գիւղական դիւանը կանչեցին յիշված 3 գիւղերի ներկայացուցիչներին, բայց դրա փոխարէն եկան 14 գիւղերի բնակիչները, որոնցից ոմանք բնակված են Մուխրանի ուդէլների կալուածում, միւսները պետական հողերի վրա, մնացածներն ազնուականների կալուածներում։ Երբ քննվեցին այն պատճառները, որոնք նրանց ստիպել էին կամայականութիւն գործ դնել, նախ այդ գիւղերի լիազօրները, յետոյ էլ բոլոր հաւաքվածները, մօտ 800 մարդ, մահակներով զինված, մի քանիսն էլ հրացաններով, միաձայն յայտնեցին հետևեալ պահանջները։

«I. Փոքրացնել գիւղական համայնքների շրջանը և ամեն մի գիւղի թոյլատրել ունենալու իր յատուկ պատգամաւորները, որոնց պէտք է յանձնվին, վերջնական վճռի իրաւունքով, գիւղի հողերի շրջանում քաղաքացիական և քրէական բնաւորութիւն ունեցող բոլոր գործերը, առանց որ և է սահմանափակութիւն անելու իրանց ձեռքով դատաստան կտրելու իրաւունքի մէջ։ Համայնքի մէջ մտած միւս դասակարգերը օգտվելու են գիւղացիների հետ բոլորովին հաւասար իրաւունքներով, իսկ համայնքի մէջ չը մտածները ոչ մի յարաբերութիւն չունենան։

II. Գիւղացիներին յանձնել իբր լիատէր սեփականութիւն գանձարանի, ուդէլների և մասնաւոր անձերի անշարժ կալուածները, ինչ հողերից էլ կազմված լինեն այդ անշարժ կալուածները, առանց որ և է տուրքի, բացի գանձարանին լաւագոյն հողերի համար տրվելիք վճարներից։

III. Քահանաներին ռոճիկ և ծխակատարութեան համար վճար որոշելը պէտք է կախված լինի իրանցից՝ գիւղացիներից, առանց հոգևոր վարչութեան միջամտութեան։

IV. Զինուորական ծառայութեան կոչված նորակոչները զետեղվելու են միայն Թիֆլիսի նահանգում գտնվող զօրքերի մէջ, իսկ պատերազմական գործողութիւնների համար կարող են նրանց գործի դնել միայն Անդրկովկասի սահմաններում։

V. Դպրոցներ շինվում են միայն գիւղացիների կարգադրութիւնով և նրանք լինելու են բացառապէս գիւղատնտեսական. դասատուութիւնը լինելու է վրացերէն և մասամբ ռուսերէն լեզուներով։

VI. Բոլորովին ոչնչացնել ակցիզը և ակցիզային վերահսկողութիւնը։

VII. Մամուլի լիակատար ազատութիւն։

VIII. Իրանք միանում են այն ռուսների հետ, որոնք կոչվում են ազատամիտներ։

IX. Վերոգրեալ պահանջները ճշտութեամբ իրագործելու համար ժամանակամիջոց որոշում են մինչև մարտի 14-ը, որից յետոյ նրանք իրանց համարում են ազատ՝ գործելու իրանց ուզածի պէս այդ բոլոր յիշված կէտերում։

«Կարգը վերականգնելու և գաւառական վարչութեանն օգնելու համար գիւղացիներից պահանջելու կամայական կերպով կտրված անտառի և պատճառած ուրիշ փասների արժէքը, Մուխրանի գիւղի և նրա մօտակայ շրջանը ուղարկվում է մի բատալիօն հետևակ զօրք, ամենից շատ խառնակութիւն հանող երեք գիւղերի (Ցիլկանի, Ջալիսի և Մճադիս Ջվարի գիւղերը, որոնց բնակիչների թիւը հասնում է 550 հոգու) վրա դնելով այդ զօրքերին ուտեստ մատակարարելու պարտականութիւնը»։

ՄԱՄՈՒԼ

«Մշակի» մէջ մենք տպագրեցինք «Кавказъ» լրագրի մի թղթակցութեան թարգմանութիւնը, ուր նկարագրված էր Բագուի կոտորածից յետոյ տեղի ունեցած այն խորհրդակցութիւնը, որ հրաւիրել էր գեներալ Ամիլախօրին։ Այդ խորհրդակցութեան մասնակցած երդուեալ հաւատարմատարներից մէկը, պ. Բիկօվ, «Кавказъ» լրագրին ուղղած մի նամակով կամեցել է վերականգնել իր արտասանած ճառի իսկական բովանդակութիւնը։ Բաւական աչքի ընկնող հակասութիւններով հարուստ մի ճառ է եղել դա։ Պ. Բիկօվ սկսել է նախ Բագուի ոստիկանութեան անհոգութիւնից ու անտարբերութիւնից, որոնք, ճիշտ որ, ամեն տեղ և ամեն խօսակցութեան մէջ չափազանց աչք ծակող հանգամանքներ էին։ Սակայն պ. Բիկօվ ոստիկանութեան գործունէութեան վերաբերմամբ բաւականացել է միայն արձանագրողի դերով և ասել է թէ քննութիւնը կարող է պարզել այդ անհասկանալի անտարբերութեան պատճառները։ Յոյս դնելով քննութեան վրա, պ. Բիկօվ, սակայն, աւելորդ է համարել մտածելու, որ հետևողականութեան և լօգիկայի տարրական պահանջներով նոյն քննութեան պէտք էր վերապահել և կոտորածի բուն պատճառների պարզումը։ Բայց այստեղ պարոնը միւս բարով է ասել և՛ առողջ դատողութեան, և՛ լօգիկային ու յանձն է առել բացատրելու, թէ ինչու Բագուի թուրքերի մի մասը անակնկալ կերպով յարձակվեց հայերի վրա և սկսեց կոտորել կանանց, երեխաներին անգամ, հրդեհել տները, մի խօսքով ցոյց տալ այնպիսի խժդժութիւններ, որոնք Ջենգիզխանի ժամանակներն են յիշեցնում։ Մինչև այժմ ոչ Բագուի հայերը, ոչ թուրք հասարակութեան բանիմաց մասը դեռ չեն կարողացել իմանալ հասարակութեան տականքների այդ վայրագութեան բուն պատճառը։ Բանից դուրս է գալիս, որ Բագւում իմանում է այդ պատճառը միայն պ. Բիկօվը։ Մի քանի ենթադրութիւնից յետոյ պ. Բիկօվ ուղղակի գալիս ասում է, թէ կոտորածի պատճառը հայ «կօմիտեաներն» են։

Այս առիթով «Бакин. Извѣс.» լրագիրը շատ իրաւացի կերպով նկատում է.

Կոտորածը և թալանը կատարել են հասարակութեան տականքները, այն տականքները, որոնք, ամենայն հաւանականութեամբ, նոյն իսկ հասկացողութիւն էլ չունեն ոչ «սօցիալ—դեմօկրատիական պրօպագանդայի», ոչ մանաւանդ «հայկական գաղտնի կօմիտեների» մասին, տականքներ, որոնք նոյն իսկ քաղաքից չէին, գլխաւորապէս հարևան գիւղերից, որոնք աւելի ևս քիչ գործ ունեն իրանց բոլորովին ազատ «կօմիտեների» հետ։ Մենք ենթադրում ենք, որ «հայկական գաղտնի կօմիտեների» անզգոյշ յիշատակութիւնը աւելի կարող է մոլորութեան մէջ գնել հասարակական կարծիքը, որին անմատչելի են այն փաստերը, որոնցով կարելի է ճշմարիտ համոզմունք կազմել 6—10 փետրվարի քաջագործութիւնների հեղինակների մասին։

Իսկ մենք մեր կողմից յիշեցնում ենք ազնուականութեան Թիֆլիսի նահանգական պարագլուխ իշխան Մելիքօվի այն նամակը, որ նա ուղարկել էր «Русь» լրագրին և որի թարգմանութիւնը տպեցինք «Մշակում»։ Այդտեղ այդ անկողմնապահ և լաւատեղեակ հասարակական գործիչը խիստ պերճախօս փաստերով ցոյց է տուել, թէ որքան ողորմելի են այն մարդիկ, որոնք չեն ուզում տեսած լինել իսկական պատճառները և արագ ու հեշտ եզրակացութիւններ են հանում, դատաւորի դերի մէջ են մտնում։ Պ. Բիկօվին մենք կը յանձնարարէինք կարդալ իշխան Մելիքօվի նամակի այն կտորը, որի մէջ ասված է թէ Թիֆլիսում կոտորածի օրերում և յետոյ ամենայն եռանդով լուրեր էին տարածում, թէ վրացիները հայերին պիտի կոտորեն, հայերը վրացիներին կամ հայերն ու վրացիները՝ ռուսներին և այլ այսպիսի հրէշաւոր անեկօտներ։ Միթէ դարձեալ պիտի ասեն պ. պ. Բիկօֆները թէ այդ բանն էլ ինչ որ «կօմիտեաների» գործն է։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Երբ Բագուի աղէտալի դէպքերի նկարագրութիւնը տպվեց Անգլիայի լրագիրների մէջ, բնականաբար, մեծ ցնցումն առաջ բերեց։ Ինչպէս երևում է մեր ստացած տեղեկութիւններից, Անգլիայում ապրող Հնդկաստանի մուսուլմանները շտապեցին իրանց զայրոյթը և ցաւակցութիւնը յայտնել Բագուի կոտորածների առիթով։ Մի խումբ ականաւոր մուսուլմաններ հետևեալ հեռագիրն ուղղեցին Էդինբուրգից հայազգի ժուռնալիստ պ. Շիրազլին, որի թարգմանութիւնը առաջ ենք բերում։

«Էդինբուրգից Լօնդօն, Շիրազլին, փետրվարի 18-ին։ Մենք շտապում ենք ուղարկելու մեր անկեղծ ափսոսանքը և համակրութիւնը Բագուի այն վայրենի և սարսափելի կոտորածների մասին, որոնք կը մնան միշտ մի արիւնալի արատ Կովկասի ապագայ պատմութեան մէջ։ Մենք, Հնդկաստանի մուսուլմաններս, միանում ենք բոլոր քաղաքակիրթ ազգերին դատապարտելու համար քսաներորդ դարում անօրինակ այդ նախատինքի հեղինակներին։ Սակայն մենք յոյս ունենք, որ դա պէտք է այսուհետև աւելի ևս ամրացնէ այն բարեկամական յարաբերութիւնները, որոնք մինչև այժմ գոյութիւն ունէին մեր և մեր եղբայր հայերի մէջ։ Միրզա բէկ խան Բահադուր, Մանճէրջի Սակէրֆի, Միրզա Ալիի Աշրաֆ, Հուսէյն Աշրաֆ Մադրասի, Ջաֆար-Կուլի խան Նաբաբ, Միրզա Արիֆ, Միրզա Կաֆար Ղանդահարի, Ակբար Մուհամմեդ Բին Սայիդ, Աբու-Ջաֆֆար-Բին-Կասիմ-Ալ-Մուզզաֆար Իսֆահանի»։

Օքսֆորդում ապրող մուսուլմանների մի այլ խումբ ուղարկել է դարձեալ Շիրազլին հետևեալ հեռագիրը.

«Հաճեցէք հասցնել Կովկասի մեր հայ և մուսուլման եղբայրներին մեր ամենաանկեղծ ափսոսանքները այն սոսկալի կոտորածի համար, որ տեղի է ունեցել Բագւում։ Մենք մուսուլմաններս սաստիկ վշտացած ենք՝ լսելով դրա մասին։ Տայ Աստուած, որ դա լինի շաղկապ եղբայրական միութեան հայերի և մուսուլմանների մէջ։ Մենք կարող ենք ապահովացնել, որ այս անկեղծ զգացմունքները, որոնք գալիս են Հնդկաստանի մի խումբ մուսուլմանների կողմից, պէտք է ընդունվեն Կովկասի մեր հայ եղբայրների կողմից այն ոգով, որով նրանք առաջարկվում են։ Մնում ենք անձնուէր. Ռ. Մուշարրաֆուլ Հօգգ, Սէյիդ Հաջի խան, Միրզա Մուհամմէդ Նաւաբ, Բհադուր-Րիզա-Գուլի խան Ջանգ, Ալի-Ասկէր Հէյդարաբադցի, Միրզա Հասան Գուլի խան, գնդապետ եւ մայոր Հասան Ազիզ Ահմէդ բոմբայեցի, Ջամալէդդին-էֆէնդի, Միրզա Ահմէդ ղազվինցի, Միրզա Հուսէյն ֆիրմանցի»։

ԲԱԳՈՒԻ ԱՂԷՏԻ ԶՈՀԵՐԻ ՕԳՏԻՆ

«Մշակի» № 32-ում տպված կարգից 687 ր. 16 կոպէկ գումարի նուիրատուների ցուցակը հետեւեալն է. Պայտառ արհեստաւորներից 15 ր., եղբ. Բաղդասարօֆների գործակատարները—6 ր. 22 կ., եղբ. Ղազարեանք, Յ. Մովսիսեան, Զ. Ալէքսանդրեան, եղբ. Մելիքեաններ, Հ. Աստուածատրեան, եղբ. Յովհանջանեաններ, եղբ. Սրբոբշչիկեաններ, Ն. Աթաբէկեան, Ա. Վարդանեան, Ս. Պետրոսեան, Մ. Տէր-Սաղաթէլեան, Մ. Կոստանեան, Ա. Սարգսեան, Ս. Յովակիմեան, Պ. Գաֆաֆեան, եղբ. Ղասաբեաններ, եղբ. Ռստակեաններ, Թ. Մահտեսի Աղապապեան, Հ. Գօրոյեան, Վ. Մուրուզեան, Բ. Զատիկեան, եղբ. Մկրտումեանք, եղբ. Բոյաճեաններ, Մ. Տէր-Աղայեան, Կ. Օհանեան, Ա. Գաբրիէլեան, տիկ. Տէր Խաչատրեան, Ս. Տէր-Յակոբեան և Յ. Ֆալակեան, 5-ական րուբլի. Յ. Տէր-Կարապետեան, Ար. Սրաջեան, Գ. Դրամբեան, Յ. Շահրազեան, եղբ. Ռոստանջեաններ, Հ. Ղօլթուղչեան, Յ. Ասլանեան, եղբ. Հալաճեան, Գ. Ղօլանճեան, Գ. Յարութիւնեան, եղբ. Ղոնդաղչեաններ, Մինաս աւագ քահ. Տէր-Պետրոսեան, Ա. Վարդանեան, Վ. Լադիֆեան, Ս. Զիթողեան, Ե. Վարոսեան, Մ. Շխեան, Պ. Կարապետեան, Գ. Խարմանդարեան, Վ. Տէր-Մելքոնեան, Ա. Սողոմոնեան, Ն. Փինաճեան, Էլբակեան, Յ. Դաբաղեան, Յ. Կոստանեան, Ռ. Խանամիրեան, Բաղդասար Ղ., Ս. Տէր-Մելիքսեդեկեան, Մ. Ալլահվերդեան, Ոֆ, Յ. Պապոյեան, Յ. Վարդանեան, Յ. Բարսեղեան, Յ. Թասլախչեան, Ա. Թեանեան, տիկին Մարիամ Զանփոլադեան, Թ. Ռաշմաճեան, Պ. Պետրէեան, Գ. Պետրոսեան, և Ա. Երամեան 3-ական րուբլի. Ս. Փչեմեան 2 ր. 75 կ., Ն. Թորոյեան 2 ր. 50 կ., Ե. Դոմինիկեան, Մ. Բոյախչեան, Վ. Մուլթաֆեան, Մ. Մխչեան, Ն. Արապեան, Յ. Չիլինկարեան, Ս. Չիկարճեան, Ղ. Սուրէնեան, Զ. Վանեցեան, եղբ. Բասենցեաններ, Փամբուսլի, Զառայեաններ, Գ. Փչեմեան, Յ. Յարութիւնեան, Կ. Փիլոյեան, եղբ. Ղազանճեաններ, Գանձակեցի, տիկին Թագուհի Բէկ-Յովսէփեան, Վաղինակ քահ. Ֆոոյեան, Յ. Աստոյեան, Յ. Ղարիբեան, Մ. Պապոյեան, Կ. Նոհրատեան, Ա. Պետրոսեան, Կ. Գրիգորեան, Մ. Մէժլումեան, Պ. Շիշմանեան, Հ. Վարդանեան, Ս. Ալոյեան, Յ. Շաւշետցեան, եղբ. Ոսկանեանք, Գ. Արաբեան, Մ. Գ. Նալբանդեան, Վ. Աւետեան, Տ. Գիւզալեան, Վ. Յարութիւնեան, Կ. Փամփուխչեան, Վ. Շեխեան, Կատիկարով (յոյն), Դ. Միրիմանեան, Կ. Թոփչեան, Մ. Եազճեան, Հ. Ասլիեան, Ա. Թունեան, Յ. Դաւրիշեան, Ա. Նազարեան, Մ. Զօպանեան, Հ. Տէր-Խաչատրեան, Ն. Ղազանճեան, Մ. Յովհանջանեան, Ա. Փորսուղեան, Մ. Տօնոյեան, Կորիւն քահ. Քօթանճեան, Արսէն քահ. Տէր-Գրիգորեան, Կ. Արզանգուլեան, Մեսրոպ քահ. Գրիգորեան, Գ. Էօքսիւզեան, Յ. Այվազեան, Կ. Ստամբօլցեան, Խ. Մանտալեան, Աղ. Ճ., Երիցուհի Արծրունի և Կ. Սաֆարեան 2-ական րուբլի. Մահտեսի Յ. Մաւէլեան, Մ. Սողոյեան, Ա. Քանդարեան, Մ. Միքայէլեան, Ա. Աբրահամեան, եղբ. Փըչեմեաններ, Յ. Ղազանճեան, Փ. Պալասանեան, Ս. Ղօլթուխչեան և Յ. Փալանճեան 1 ր. 50-ական կոպէկ. Ա. Ծաղջօղեան և Տ. Խախոեան 1 ր. 40-ական կոպէկ. Վարոս Ղարագեօզեանց, Թ. Արմապեխեան, Մ. Կանեցեան, Ք. Յարութիւնեան, Մ. Ղարիբեան, Ա. Վարդանեան, Տ. Մելքոնեան, Մ. Գրիգորեան, Մ. Մուրայաճեան, Ս. Քեօսաբաբեան, Մ. Կարապետեան, Քէքէջեանց, Խ. Գալֆայեան, Ա. Թոքմաջեան, Հ. Դօխիկեան, Տ. Թիւթիւնջեան, Հ. Վանեցեան, Հայր Քաքամ, Խ. Վանեցեան, Ա. Չիլինգարեան, Վ. Տատէեան, Յ. Նազարէթեան, Յ. Յովոյեան, Գ. Զարխչեան, Ս. Քեօսաբաբեան, Խ. Առաքելեան, Գ. Քեօսաբաբեան, Զ. Քեօսաբաբեան, Պ. Պարսամեան, Կ. Ֆարսամեան, Մ. Տէր-Մելքոնեան, Մ. Աղաբալեան, Գ. Քէրբէրեան, Ղ. Մխիթարեան, Մ. Սարգսեան, священникъ Каишевъ, Ա. Վառոյեան, Հ. Եկմալեան, Յ. Գզիրեան, Մ. Ասլանեան, Գ. Սողոմոնեան, Գ. Գասպարեան, Կ. Նոհրատեան, Զ. Թութոյեան, Յ. Բաղդասարեան, Մ. Նալեան, Ա. Յարութիւնեան, Ե. Տէր-Մինասեան, Զ..., Բ. Ոսկանեան, Պ. Ջուհլակեան, Յ. Մամիկոնեան, Տ. Խաչատրեան, Ա. Ղարիբեան, Վ. Ղարագեօզեան, Յ. Տօնոյեան, Ա. Ասլիեան, Գ. Սելումեան, Մ. Շախբէրեան, Մ. Մանուկեան, Ս. Մինասեան, Հ. Խաժակնեան, Կ. Մալխասեան, Դ. Կիրակոսեան, Բ. Մելքոնեան, Մ. Թոխաթչեան, Յ. Մարտիրոսեան, Մ. Վարժապետեան, Ա. Տէր-Գրիգորեան, Գ. Թոքմաճեան, Ղ. Վարդանեան, Ս. Յովակիմեան, Նիկ. Օղլաւաձէ, Մ. Զախալեան, Ա. Փահլեվանեան, եղբ. Արաբաջեաններ, Գ. Ասոյեան, Կ. Շահրազեան, Խ. Յակոբեան, Խ. Գզիրեան, Մ. Պապիկեան, Ա. Խանամիրեան, Գ. Խանամիրեան, Ա. Աւետսեան, Մ. Գասոյեան, Ա. Ասլոյեան, Խ. Քեանդարեան, Գ. Քեանդարեան, Վ. Զարչօղլեան, Հ. Ղուկասեան, Ե. Նալբանդեան, Յ. Արաջեան, Յ. Իւսուֆեան, Գ. Դուրկարօղլեան, Ս. Տէր-Մարտիրոսեան, Մ. Յարութիւնեան, Ա. Փչեմեան, Ս. Ա., Հ. Ղազարեան, Յ. Յովհաննիսեան, Յ. Արաբեան, Մ. Այվազեան, Յ. Ղօնդախչեան, Սմբատ Ղ., Ա. Պետրոսեան, Գ. Դիրլիկեան, Ս. Քեօմուրճեան, Հ. Նալբանդեան, Ա. Ե., Ս. Բուպուեան, Տ. Ամբարջեան, Պ. Մեսրոպեան, Յ. Քիշմիշեան, Ա. Մանուկեան, Ս. Թորոսեան, Ա. Սուլթանեան, Ս. Գօրոյեան, Կ. Մելիքեան, Վ. Սարգսեան, Գ. Յովհաննիսեան, Գ. Տէր-Աղայեան, Ա. Աբաջեան, Թ. Ագնաւուրեան, Թոդոր (յոյն), Պ. Բժիկեան, Ն. Տ. (յոյն), Ա. Պասմաճեան, Գ. Մխճեան, Թ. Մարգարեան, Ն. Բէրբէրեան, Մանուկեան, Խ. Ստեփանեան, Բ. Արաբեան, Գ. Էլբակեան, Թ. Մօռոյեան, եղբ. Զամբաղեաններ, Տ. Ս., Գ. Մուրադեան, մի ոմն, Վ. Պօղոսեան, Գ. Թօսունեան, Կ. Շահրազեան, Գ. Տէր-Մինասեան, Գ. Գասպարեան, Թ. Ագնաւուրեան, Ս. Զաքարեան, Ն. Պետրոսեան, Խ. Բուրնազեան, Ա. Ճուղուրեան, Ս. Տէր-Ներսիսեան, Ն. Քըրմոյեան, Յ. Բէրբէրեան, Խ. Տէր-Գիւլեան, Ա. Պետրոսեան, Ս. Ղօլանճեան, Գաբրիէլ քահ. Տուրփայեան, Լ. Աղամալեան, Մելքիսեդեկ աւագ քահ. Մանուկեան, Ա. Էհրամճեան, Ս. Մուլթաֆեան, Խ. Բայբուրթցեան, Ռ. Աւան-Իւզբաշեան, Կ. Արխիպեան, Գ. Աստոյեան, Կ. Յովհանջանեան, Գ. Գրիգորեան, Ար. Շաղգամեան, Ա, Նալբանդեան, և Կ. Կարապետեան 1-ական րուբլի։

(Կը շարունակվի)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Ս. Թառայեանի «Արշալոյս» դրամատիկական պատկերը Թիֆլիսի հայոց բեմի վրա)

I

Շաբաթ, մարտի 12-ին, Թիֆլիսի հայոց դրամատիկական խումբը Արտիստական Թատրոնում խաղաց Ս. Թառայեանի «Արշալոյս» Թատերական հեղինակութիւնը հինգ գործողութեամբ։

Ս. Թառայեանի ներկայ հեղինակութիւնը չէ ներկայացնում մի պիես սովորական իմաստով։ Իբրև պիես, իբրև դրամա նա թոյլ է և անկատար։ Ուստի նախ քան նրա մասին խօսելը պէտք է պայմանաւորվել, թէ ինչ տեսակ հեղինակութեան հետ մենք գործ ունենք։ Հեղինակը նրան անուանել է «կենսագրական պատկեր»։ Եւ արդարև, եթէ «Արշալոյսը» ունի հետաքրքրութիւն և գրաւեց հանդիսականների ուշադրութիւնը ու ծափահարութիւնները, դա շնորհիւ այն հանգամանքի էր, որ նա պարունակում էր իր մէջ «Հիւսիսափայլի» գործողների պատկերները։ Պիեսում դուրս են բերված Ս. Նազարեան, Մ. Նալբանդեան, Ս. Շահ-Ազիզ, Նազարեանցի ընտանիքը, նրա բարեկամները և թշնամիները։

Մատաղ երիտասարդութեան համար հաճելի էր տեսնել «Հիւսիսափայլի» հերոսներին իրանց դէմքերի գծագրութեամբ և մի քանի բնորոշ խօսքերով, վերստեղծել անցեալ գործողների պատկերները, մի քանի րոպէով տեղափոխվել դէպի անցեալը, դէպի հայոց մտաւոր կեանքի սիրելի շրջաններից մէկը։ Այդպիսով «Արշալոյսը» մի տեսակ կենսագրական լուսաբանութեան, մանկավարժական ուսուցածքի նշանակութիւն ունի, գրաւիչ պատանի երիտասարդութեան համար։

Իսկ այն անձանց համար, որոնք կը ցանկանային տեսնել դրամա իր բոլոր խորութեամբ, կենցաղավարական գեղարուեստական մի պատկեր իր օրգանական ամբողջութեամբ, նրանք քիչ բաւարարութիւն կը ստանան «Արշալոյսից»։ Կենսագրական նիւթը կաշկանդել է հեղինակին և թոյլ չէ տուել ստեղծագործելու դրամատիկական մի գործ, թէև մի և նոյն ժամանակ նոյն կենսագրական տարրն է, որ դարձնում է «Արշալոյս»-ը գրաւիչ հանդիսականի համար։ Պէտք է նկատել, որ «Արշալոյսի» մէջ կան մի քանի ուժեղ և զգացված տեսարաններ, ինչպէս, օրինակ, Միքայէլի հրաժեշտի տեսարանը։

Դերակատարների մասին կարճ կերպով կարող ենք ասել հետեւեալը։ Տիկին Սիրանոյշ Էմմայի դերում տուեց Նազարեանի կնոջ մի հետաքրքրական պատկերը, որի էութիւնը շատ քիչ է լուսաբանված մինչև այժմ մեր գրականութեան մէջ։ Նազարեանի կնոջ դէմքի այդ լուսաբանութիւնը հետաքրքրական էր։

Ս. Նազարեանի դերը կատարում էր Պետրոսեան։ Նա աշխատում էր նմանվել Նազարեանին իր գրիմով և խօսակցութեան ձեւով։ Բնորոշ էր Զարիֆեան Մ. Նալբանդեանի դերում, բայց նա քիչ նիւթ ունէր Նալբանդեանի դէմքը գծագրելու համար։ Օհանեան, Սմբատի դերում, վատ չէր իր գրիմով, բայց չափազանց ցածր էր խօսում. Ուշտունի՝ Սադայի դերում բաւարար էր։ Տէր-Դաւթեան՝ Օհանի դերում ներկայացնում էր Թիֆլիսցի մանր վաճառականի տիպ։ Միրաղեանը Դաբաղեանի դերում և Յարութիւնեանը Թորգոմեանի դերում բնորոշ էին։ Տիկին Նոնիկեան լաւ օր. Արշալոյս էր։ Միւսները ընդհանրապէս բաւարար էին։

Հանդիսականները մի քանի անգամ բեմ կանչեցին հեղինակին և ողջունեցին նրան ծափահարութիւններով։

Սիրող

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Մարտի 10-ին

Բագուի կոտորածը սարսափ ազդեց Ղուբայում. շատ վախենում էին, որ գուցէ այդ բարբարոս դէպքը արձագանք գտնէ գաւառներում էլ։ Սարսափը սաստկացաւ մանաւանդ այն ժամանակ, երբ երկու Թուրք չնչին բանի պատճառով իրար սպանեցին։ Սակայն շնորհիւ գաւառապետի, երկու կողմերի հոգևորականութեան և պատւաւոր մարդկանց ձեռք առած եռանդուն միջոցների՝ կարգը քաղաքում մինչև օրս չէ խանգարվել, թէև վախը դեռ չէ անցնել։ Քաղաքը յայտարարված է պատերազմական վիճակի մէջ, որ բաւական հանգստացրեց հայերին։

Ղուբայի հայերը մտերմական յարաբերութեան մէջ են եղել Թուրքերի հետ, երկար տարիներ ապրել են իրար հետ խաղաղ, կապված են իրար հետ առևտրական կապերով և ոչ մի «չէյթան» չէ անցել նրանց մէջ։ Գաղթելով Ղուբա գլխաւորապէս վաթսունական թւականներին՝ հայերը զարգացրել են վաճառականութիւն և արհեստներ, հիմնել են հայոց դպրոց, որտեղ յաճախելը պարտաւորեցուցիչ է եղել բոլոր հայ երկու սեռի սաների համար. Ղուբայում չեք գտնի պարապ հայ երեխայ, որ դպրոց չը յաճախէ։ Ներկայումս Ղուբայում հայոց թաղը նախանձելի է ամբողջ քաղաքում։ Եւ եթէ, Աստուած չանէր, Բագուի կոտորածը արձագանք գտնէր այստեղ, դա սոսկալի ոճիր կը լինէր ընդդէմ կուլտուրայի...

Բագուի կոտորածին զոհ գնացածների համար հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց հայոց եկեղեցում։ Պատարագիչ Խաչատուր քահ. Փանեան ճառ խօսեց, քարոզելով համբերատարութիւն և մի և նոյն ժամանակ ինքնապաշտպանութիւն։ Պէտք է հանգանակութիւն սկսվի յօգուտ աղէտից վնասվածների։ Ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ թէ Թուրքերը և թէ հայերը համոզված են, որ Բագուի կոտորածը հետևանք չէր ոչ կրօնական-ազգայնական ատելութեան և ոչ տնտեսական պատճառների. պատճառը համարում են այն «չէյթանին», որ այնքան տաղանդաւոր կերպով ներկայացրեց մահմեդականների հոգևոր պետը...

Վարդանանց տօնի օրը հայերը փակել էին խանութները և ներկայ էին պատարագին։ Այդ օրն էլ Տէր-Խաչատուրը տօնի առիթով քարոզ խօսեց։

Սրանից մի քանի տարի առաջ Բագւում վախճանվեց Յակոբ Ադամեան, որը կտակով նուիրել էր Ղուբայի հայոց դպրոցին 300 րուբլի։ Հանգուցեալի ժառանգը՝ Նիկողայոս Ադամեանը, կատարելով իր հօր կամքը՝ ուղարկել է դպրոցին 100 րուբլի, խոստանալով, որ մնացած 200 րուբլին կը վճարէ ապագայում, տարեկան 100 րուբլի։ Պարոնի այս քայլը արժանի է շնորհակալութեան։ Հանգուցեալ Ադամեանը իր կենդանութեան ժամանակ մեծ բարերարութիւն է արել դպրոցին։ Ասում են, որ նրա ժառանգը, հետևելով իր հօր օրինակին, խոստացել է մշտապէս տալ Ղուբայի հայոց դպրոցին տարեկան 100 րուբլի։

N. N.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս, մարտի 14-ին

Ստիպված լինելով գնալ Պարիզ, մասնակցելու արևելագէտների միջազգային XIV կոնգրէսին, պարտք եմ համարում յայտնել «Հանրագիտական բառարանի» պ.պ. բաժանորդներին, որ անկարող կը լինեմ լոյս ընծայել բառարանը որոշած ժամանակին։ Պատճառը հետեւեալն է։ Ես սխալվել էի, պատուիրելով պատկերների կլիշէները Թիֆլիսում։ Երբ բառարանի Ա. տառի տպագրութիւնը աւարտվեց, դուրս եկաւ, որ պատկերները անաջող են, որովհետև նուրբ կլիշէներ Թիֆլիսում պատրաստելը հնարաւոր չէ։ Պէտք եղաւ կանգնեցնել տպագրութիւնը և նոր կլիշէների պատուէր տալ Պետերբուրգում և արտասահմանում։ Ապա յայտնվեց, որ իմ խոստացած 300 պատկերները շատ քիչ են, պէտք էր պատուիրել մօտ 600 կլիշէ։

Թէ այդ հանգամանքը, թէ իմ մեկնումը Թիֆլիսից պէտք է ուշացնեն բառարանի տպագրութիւնը, որը լոյս ունեմ վերսկսել մայիսին, երբ կը վերադառնամ Պարիզից և երբ կլիշէները արդէն պատրաստ կը լինեն։ Սկսելով մայիսին Բ. տառից, տպագրութիւնը հագիւ աւարտվի նոյեմբեր ամսին, ուստի բաժանորդներից նրանք, որոնք չեն ցանկանայ սպասել մինչև այդ ժամանակ, կարող են յետ պահանջել իրանց տուած բաժանորդագինը և ստանալ մայիսին, երբ ես վերադարձած կը լինեմ։ Յայտարարութիւնը բաժանորդագնի յետ ստացման մասին կարելի է այժմ ուղարկել այս հասցէով. Թիֆլիս, տպարան «Հերմէսի», պ. Եղ. Թոփչեանին, յանձնելու Հ. Առաքելեանին։

Հ. Առաքելեան

II

Թիֆլիս, մարտի 14-ին

Յօգուտ Չխար գիւղի հրկիզեալների ստացված են հետեւեալ գումարները. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդից 500 րուբլի, Թիֆլիսի Առևտրական բանկից 300 ր., Թիֆլիսի Փոխադարձ ընկերութիւնից 150 ր., հաւաքած՝ վաճառականների աւագ պ. Յ. Շադինեանի միջոցով վաճառականների մէջ 850 ր., պ. Ն. Կաճկաճեանի միջոցով 128 ր., իշխ. Մ. Թումանեանի միջոցով 235 ր., Վանքի եկեղեցում մարտի 13-ի պատարագից յետոյ 83 ր. 61 կ., զանազան անձնաւորութիւններից 155 րուբլի։ Ընդամենը 2401 ր. 71 կոպէկ։

Յանձնաժողովի գանձապահ՝

իշխ. Մ. Թումանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է $1^{1}/_{2}$ թերթից։

—

Թիֆլիսում լուր է ստացվել, որ Կովկասի փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը Պետերբուրգից իր պաշտօնավայրը մեկնելու է մարտի 20-ին։

—

Կիրակի, մարտի 13 ին, Մողնու եկեղեցում, պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին։ Եկեղեցու ամբողջ բակը լցված էր հասարակութեան խուռն բազմութեամբ, կային ինտելիգենցիայի, մամուլի, առևտրական, արհեստաւոր և բանւոր դասակարգերի, ուսանող երիտասարդութեան ներկայացուցիչներ։ Հոգեհանգստից յետոյ պ. Տ. Յովհաննիսեան և պ. Ա. Սահակեան ճառ արտասանեցին, որոնց մէջ բնորոշեցին հանգուցեալին իբրև մարդ, գաղափարական գործիչ և իբրև ընկեր և ցոյց տուին թէ որպիսի քնքոյշ, կարեկից, ներողամիտ, մարդասէր և ընկերասէր յատկութիւններով էր օժտված նա և որքան խոր և համոզված կերպով անձնատուր էր եղել գաղափարական գործունէութեան, որքան անփոխարինելի է նրա կորուստը հայ ժողովրդի համար։ Ոգևորված ճառեր խօսեցին և մի ուսուցիչ ու մի քանի այլ անձինք։

—

Կիրակի, ամսիս 13-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսում հանգուցեալ Մակար Եկմալեանի թաղումը։ Յուղարկաւորութեան հանդիսին ներկայ էր ժողովրդի խուռն բազմութիւն. Վանքի մայր եկեղեցում պատարագին երգում էր Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը, որ նոյն դպրոցի բարձր դասարանների աշակերտների հետ ուղեկցեց հանդիսին հանգուցեալ հայ երաժշտի ձայնագրած շարականները և «Հայր մերը» երգելով մինչև հանգստարանը։ Թեմակալ առաջնորդը ներկայ էր յուղարկաւորութեան. Ներսիսեան դպրոցի շինութեան առաջ, ուր հանգուցեալը 12 տարի ձայնագրութեան ուսուցչի պաշտօն էր կատարել, կանգ առաւ հանդէսը. այստեղ հանգուցեալի նախկին աշակերտներից մէկը դամբանական խօսեց։ Հանգուցեալի գերեզմանի վրա սրտաուչ և զգացված խօսեցին նոյնպէս նրա նախկին աշակերտներից երեքը, որից յետոյ երգեցիկ խումբը երգեց հանգուցեալի ձայնագրած հոգևոր և ազգային երգերի լաւագոյն կտորները. Նրանց քաղցր մեղեդիների հնչիւնների տակ ծածկվեց հողը հանգուցեալի վրա։ Թաղմանը ներկայ էին Թիֆլիսի Կայսերական երաժշտական դպրոցի և Ներսիսեան ուսումնարանի մի քանի ուսուցիչները. առաջինների կողմից պսակ էր դրված հետեւեալ մակագրութեամբ. «Талантливому композитору и неутомимому труженику»։ Տեղիս երաժիշտ Յ. Տէր-Դաւթեանը իր կողմից դրել էր պսակ, որի ճակատին վրա արձանագրած էր հետեւեալը. «Մեծ հայ երաժշտին»։

—

Քութայիսում մարտի 8-ին կայացել է տեղական հասարակութեան ներկայացուցիչների մի մասնաւոր ժողով։ Այդ ժողովը կազմել է մի կօմիտէտ, որի նպատակն է աշխատել առաջն առնել վերջին ժամանակներս յաճախակի կրկնվող ոճրագործութիւնների—սպանութիւն, հրդեհ և այլն։ Այդ ընկերութիւնը պրօպագանդայով, կոչերով և այլ այդպիսի միջոցներով շուտով գործի կը ձեռնարկէ և յոյս ունի խաղաղացնել հասարակութիւնը։

—

Մարտի 10 ին Բաթումի քաղաքային ուպրավային ներկայացել են 50 հոգի առեւտրականներ և խնդրել, որ քաղաքում յայտարարվի կիրակնօրեայ անպայման հանգստութիւն և, բացի փուռերից և մսագործների խանութներից, ոչ մի վաճառատուն չը բացվի։ (Ч. В.)

—

Մոսկվայում գոյութիւն ունեն ժուրնալիստների կուրսեր։ Այդ կուրսերի ուսանողները միաձայն վճռել են չը ստանալ և չը կարդալ ոչ «Гражданинъ», ոչ «Московскія Вѣдомости» և ոչ էլ «Новое Время» լրագիրները։ (Н. Об.)

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ շուտով լոյս է տեսնելու Մաքսիմ Գօրկու մի նոր պիեսը, որի անունն է «Բանտում»։

—

Մարտի 9-ին Բաթումում բոլոր տպարանները փակ են եղել, այդ պատճառով էլ «Черн. Вѣст.» լրագիրը լոյս չէ տեսել։ Փակ են եղել և առեւտրական հիմնարկութիւնները։ Դպրոցներում դասերը դադարած են եղել։ (Черн. Вѣст.)

—

Մեր խմբագրութիւնը մի քանի ցաւակցական հեռագիրներ ու նամակներ ստացաւ Քրիստափոր Միքայէլեանի մահվան առիթով Սուխումից, Պետերբուրգից, Արմաւիրից և այլ տեղերից։

—

Գարունը բացվում է։ Խօլերայի երկիւղը դեռ Դամօկլեան սրի նման կախված է Ռուսաստանի և մանաւանդ Կովկասի գլխին։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը կարգադրել է, որ բոլոր ջրային ճանապարհների վրա նշանակվեն բժշկական վերահսկողութեան կէտեր, բժիշկների վարչութեան տակ։

—

Պետերբուրգում կազմված է մի յատուկ խորհուրդ, որը ծրագիրներ է մշակում պետութեան պաշտպանութեան, նրա ներքին խաղաղութիւնը և անդորրութիւնը երաշխաւորելու համար։ «Бирж. Вѣд.» լրագրի աշխատակիցը խօսակցութիւն է ունեցել այդ խորհրդի բարձր դիրքի և պետական բարձր պաշտօնեայ անդամի հետ։ Խօսակցութեան ժամանակ պաշտօնեան յայտնել է, որ պետական կարգերը և առհասարակ անդորրութիւնն ու կարգը երկրի ներսում պաշտպանելու համար՝ խորհուրդն արդէն աչքի առաջ է ունեցել ոստիկանութեան մէջ եղած բոլոր նիւթերը, բայց՝ տեսնելով, որ դա բաւական չէ, դիմել է Անգլիային, Ֆրանսիային և Ամերիկային, խնդրելով նրանցից այդ առիթով գոյութիւն ունեցող բոլոր օրէնքները և կարգերը։ Այդ պաշտօնեան յայտնել է, որ անհրաժեշտ է համարում քաղաքացիների համար մտցնել որ և է պաշտպանութեան միջոց,—միլիցիա կամ ոստիկանութիւն, որ պաշտպանէ քաղաքացիներին. դա անպայման անհրաժեշտ է, ասել է նա։—Քաղաքներն առանց այն էլ ծանրաբեռնված են ծախքերով. ուրեմն ինչ միջոցներով նրանք միլիցիա պէտք է պահեն, ինչպէս այդ ուզում է Մոսկվան, ուր երբ թէ մի ժամանակ արդէն միլիցիա եղել է։ Երևի պէտք է խնդրեն, որ իրանց ծախքերից ազատեն։ Ի հարկէ միլիցիայի պարտականութիւնը լինելու է հսկել միայն կեանքի ապահովութեան վրա, իսկ քաղաքական ֆունկցիաները կը մնան պետութեան ձեռքին։ Կարող եմ ասել, աւելացրել է վերջում յիշված պաշտօնեան, որ ոստիկանութեան շատ բարդ խնդիրը կը լուծվի միայն պետական կարգերը հիմնական փոփոխութեան ենթարկելու դէպքում։

—

«С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ մամուլի մասին գոյութիւն ունեցող օրէնքները քննելու համար Կօբէկօի նախագահութեամբ կազմված յանձնաժողովի նիստերին մասնակցելու են հրաւիրվում Վարշավայի և Թիֆլիսի ցէնզուրական կօմիտէտների նախագահները՝ պ.պ. Էմմաուսսկին և Մ. Պ. Գակկէլը։ Այդ հրաւէրն ուղարկված է մամուլի գործերի գլխաւոր վարչութեան դրդումով։

—

Պետերբուրգում գոյութիւն ունի մի յանձնաժողով, որից կախված է նոր երկաթուղիներ անցկացնելու գործը։ Մարտի 5-ին այդ յանձնաժողովում սկսվեց քննութեան ենթարկվել Սիբիրի մեծ երկաթուղու և Միջին-Ասիայի գծի միացման հարցը։ Միացման ծրագիր է ներկայացրել և երկաթուղային յայտնի անտրպրընեօր Ս. Ի. Մամօնտովը։ Նա խնդրում է թոյլտւութիւն Տաշկէնտի երկաթուղու «Արիս» կայարանը միացնել Սիբիրեան գծի «Պօլունօչնչի» կայարանի հետ և կամ միացման գիծն անցկացնել առհասարակ այն ուղղութիւնով, ինչ որ կը ցանկայ կառավարութիւնը, իր տեսակէտներին յարմարեցնելու համար այդ նոր զարկերակը։

—

Բօրչալուի գաւառի Ալլահվերդի գործարանում մարտի 5-ին բոլոր երկաթագործ և տաղձագործ արհեստաւորները աշխատանքները դադարեցրին, գործարանի վարչութեանը յայտնելով հետեւեալ պայմանները. 1) բանւորական օրը իջեցնել 9 ժամի, 2) ձրի բնակարան տալ, համաձայն առողջապահութեան պահանջներին, 3) օրավարձն աւելացնել 20% և 4) լաւացնել գործարանի փուռի հացը։ Գործարանի տեսուչը բանւորներին առաջարկեց ընտրել իրանց միջից պատգամաւորներ բանակցելու համար, իսկ մինչ այդ՝ իրանք թող շարունակեն աշխատանքը. բանւորները չը համաձայնվեցին։ Իսկ երբ եկաւ ոստիկանութեան գլխաւորը, առաջին ազդարարութիւնը լսելուց անմիջապէս յետոյ բոլոր բանւորները, բացի 8 հոգուց, վերսկսեցին աշխատանքները։ Աշխատել չուզեցողների հաշիւը լրիւ վերջացրին և հեռացրին գործարանից։ Կարգը չը խանգարվեց։

—

«Казан. Тел.» լրագիրը հաղորդում է մանրամասնութիւններ մարտի 5-ին Կազանի «Ֆրանսիա» հիւրանոցում ձերբակալված կասկածելի անձի մասին։ Նա իրան անուանելիս է եղել Պօրտ-Արտուրից վերադարձած բժիշկ Պօպօվ։ Նրա մօտ գտնվել են 228,000 րուբլու դրամ և տոկոսաբեր թղթեր։ Հարցաքննութեան ժամանակ Պօպօֆը իրան թունաւորեց մօրֆիով, իսկ յետոյ՝ ատրճանակը հանելով, ստիպեց բոլոր պաշտօնական անձերին սենեակից դուրս գալ։ Երբ փորձ էին անում նորից սենեակ մտնել, Պօպօֆը ատրճանակն էր արձակում։ Ոստիկանապետը հրաւիրեց հրդեհաշէջներին, որոնք ջուր սրսկեցին նրա վրա լուսամուտով, նրան գետին գլորեցին և ատրճանակն առան ձեռքից։ Բայց և այնպէս նա կարողացաւ հրազէնով մի ծանր վէրք հասցնել իր կրծքին։ Իր ասելով իր մօտ եղած փողերն ինքը գողացել է Բագուի դէպքերի ժամանակ մի հարուստ հայից։—Կազանի մի ուրիշ լրագիր՝—«Волж. Лист.»-ը հաղորդում է, որ Պօպօվի մօտ գտնված փողը և արժէքաւոր իրերը գողացված են զանազան անձերից, որոնք ողբերգական մահով մեռան Բագուի արիւնալի օրերին։

—

«Русь»-ը լսել է, որ ներկայումս մտադրութիւն կայ կրճատելու «Պետերբուրգի օտար ցէնզուրայի կենտրօնական վարչութեան» մի քանի ֆունկցիաները։ Մտադրութիւն կայ նոյնպէս կրճատելու այդ վարչութեան Ռիգայի և Օդեսայի կօմիտէտների իրաւասութիւնները, իսկ Մոսկվայի, Կիեվի, Ռեվելի և Վիլնայի առանձին ցէնզօրներին ազատել արտասահմանից բերված օտարազգի գրքերի քննութիւնից։ Այդ մտադրութիւնը սերտ կապով կապված է այն ցանկութեան հետ, որ գոյութիւն ունի Կօբէկօի յանձնաժողովում—այն է ազատել ցէնզուրայից արտասահմանից եկող բոլոր օտար լեզուով գրքերը և պարբերական հրատարակութիւնները։

—

ՄԵՐՎԻՑ մեզ գրում են. «Այսօր մարտի, 6-ին, տեղիս հայ գաղութն էլ կատարեց հոգեհանգիստ Բագւում ընկած զոհերի յիշատակին։ Երկու օր առաջ էլ թուրքաց մէջիդում թուրք հասարակութիւնը կատարել էր հոգեհանգիստ. հայերը քահանայի հետ գնացել էին ներկայ լինելու նրանց հոգեհանգստին։ Այսօր էլ մեր եկեղեցում ներկայ էին թուրք հոգեւորականութիւնը և բաւական հասարակութիւն թուրքերից։ Երկու տեղումն էլ թէ հայ քահանան և թէ մօլլան քարոզներ են խօսել, նիւթ առնելով գլխաւորապէս համերաշխութեան անհրաժեշտութիւնը երկու հարեւան ազգերի մէջ։ Ախորժելի էր տեսնել թէ ինչպէս երկու դարաւոր հարեւան ազգերը զգացված ձեռք էին մեկնում միմեանց, անիծելով այն խաւար ոյժին, որ պատճառ էր եղել եղբայրասպան կոտորածին։ Ժամի 1-ին պատարագը վերջացաւ և հասարակութիւնը գոհ սրտով և զգացված ցրվեց։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Նոր զօրքի ուղարկումը։ «Neue Freie Presse» լրագրի զինուորական քննադատը, 400 հազար մարդուց բաղկացած նոր զօրք ուղարկելու առիթով Մանջուրիա, ասում է. «400 հազար մարդ պատերազմական բեմը ուղարկելու համար հարկաւոր կը լինի զէնքի կանչել 10 հետեւակ կօրպուսներ. այդ պատճառով մնում է ենթադրել, որ վճռված է հասցնել արդէն զէնքի կանչված զօրքերի թիւը մինչև 400 հազար մարդ։ Այդ դէպքում ստիպված կը լինեն ուժեղացնել զօրամասերը 180 հազար մարդով։ Սիբիրեան երկաթուղին, որը տեղափոխութեան սահմանափակ ընդունակութիւն ունի և բացի դրանից ծանրաբեռնված է մթերքների բեռներով, կարող է պատերազմական բեմը հասցնել օրական 1000 մարդ։ 180 հազար մարդու համար կը հարկաւորվի այդ պատճառով 180 օր, իսկ եթէ 45 օր էլ աւելացնենք գնալու համար, կը ստանանք 225 օր կամ 7½ ամիս։ Նոր կազմակերպվող զօրքը այդպիսով գլխաւոր հրամանատարի տրամադրութեան տակ կը լինի միայն 1905 թւի նոյեմբերին, այսինքն այն ժամանակ, երբ պատերազմական գործողութիւնները դադարում են ամենապակասը երեք ամսով մանջուրական խիստ ձմեռվայ պատճառով։ Ռուսական բանակի նոր արշաւումը այդ հաշւով հնարաւոր է միայն 1906 թւի փետրվարին։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ձմեռվայ այդ երեք ամսվայ դադարից կարելի է օգուտ քաղել և պատերազմական բեմը ուղարկել էլի 90,000 մարդ։ Դրանից երեւում է, որ 1905 թւի նոյեմբերի մօտերքին կամ 1906 թւի փետրվարին երկու հակառակորդների շարքերը մօտաւորապէս միանման կը լինեն։ Ամենից վատն այն է, որ չէ կարելի վերացնել ամենավնասակար, ամենավատ չարիքը, այն է հեռաւորութիւնը պատերազմական բեմից։ Ինչ վերաբերում է ճապօնական ոյժերի սպառման վրա հիմնված պլանին, դա ցնորք է և դրանով չէ կարելի արդարացնել ահագին զոհերը։ (Бирж. Вѣд.) (Тлф.)

—Կուրօպատկինին յետ կանչելը և, ինչպէս կարծում են, նրա ժամանակաւոր փոխանորդ նշանակելը յանձին գեներալ Լինէվիչի, Բերլինի լրագիրները համարում են ապացոյց, որ Ռուսաստանն ուզում է պատերազմը շարունակել։ Պետերբուրգի թղթակիցները հեռագրում են, որ շուտով պատերազմական գործողութիւնների բեմն են գնալու Դրագօմիրօվ և Սուխօմլինօվ գեներալները։ (Б. В.) (Тлэф.)

Տարաձայնութիւն գեներալների միջեւ։ «Շլէզվիգեան Լրագիրը» ստացել է Պետերբուրգից հետեւեալ, ինչպէս նա հաւատացնում է, ճշգրիտ տեղեկութիւնները Կուրօպատկինի և Գրիպպէնբէրգ գեներալների միջև տեղի ունեցած տարաձայնութեան մասին։ Երբ Գրիպպէնբէրգ վերադարձաւ Սանդէպուից, ուր նրա հրամանատարութեան տակ էին ոչ թէ 62, այլ 120 բատալիօն զօրք, դէպի հին դիրքերը, Կուրօպատկին պահանջեց, որ առանձին զօրամասի իւրաքանչիւր հրամանատարը ներկայացնէր իրան մանրամասն հաշիւ իր գործողութիւնների մասին։ Գեներալ Գրիպպէնբէրգ մի կարճ զեկուցումով հրաժարվեց ներկայացնելու մի այդպիսի հաշիւ, յայտնելով, որ ամբողջ պատասխանատուութիւնը ինքն վերցնում է իր վրա և որ ինքն իսկոյն և եթ ուղևորվում է Պետերբուրգ։ Գլխաւոր հրամանատարը իր պատասխան նամակի մէջ ցանկութիւն յայտնեց անձամբ բանակցելու, սակայն Գրիպպէնբէրգը մերժեց այդ հրաւէրը։ Դրանից յետոյ նա ստացաւ կրկին վեց շատ սիրալիր տոմսակներ, որոնցով հրաւիրվում էր նա գլխաւոր բանակը, բայց մինչև անգամ չը պատասխանեց նրանց։ Կուրօպատկին կամենում էր տէլէֆօնով խօսել նրա հետ, բայց բանից դուրս եկաւ, որ տէլէֆօնային հաղորդակցութիւնը կտրված էր Գրիպպէնբէրգի դիրքերի հետ. այն ժամանակ Կուրօպատկին հրամայեց վերականգնել հաղորդակցութիւնը և կանչել Գրիպպէնբէրգին։ Գրիպպէնբէրգի օրդինարէցը զեկուցեց նրան, որ գեներալի կոկորդը ցաւում է և նա չէ կարող խօսել։ Հէնց այդ ժամանակներում Գրիպպէնբէրգին աջողվեց վերադառնալու թոյլտւութիւն ստանալ Պետերբուրգից և շուտով ապա ծանուցում ուղարկեց գլխաւոր բանակը իր Պետերբուրգ ուղևորվելու մասին։ Նոյն օրն և եթ Կուրօպատկին ճանապարհ ընկաւ Մուկդէն նրան դիմաւորելու համար, բայց Գրիպպէնբէրգ, իր գործակալներից իմանալով այդ բանը, իջաւ գընացքից, չը հասնելով Մուկդէն, և միայն երբ գլխաւոր հրամանատարը իզուր սպասելուց յետոյ երեկոյեան վերադարձաւ գլխաւոր բանակը, Գրիպպէնբէրգ ճանապարհ ընկաւ Մուկդէն և այնտեղից առանձին գնացքով շարունակեց իր ճանապարհը դէպի Պետերբուրգ։ (Нов.) (Тлф.)

—«Կէօնիգսբէրգեան Լրագիրը» հաղորդում է, որ պետական խորհրդի անդամ ինֆանտէրիայի գեներալ Ռօօպ նշանակվում է այն յանձնաժողովի նախագահ, որը գեներալ Ստեսսէլի գործողութիւնների քննութիւնը կը կատարէ և կը քննէ այն պայմանները, որոնց մէջ տեղի ունեցաւ Պօրտ-Արտուրի անձնատուր լինելը։ (Слово)

Նոր պարտութիւն Տէլինի մօտ։ Անգլիական լրագիրներին հաղորդում են Պետերբուրգից, մարտի 4-ից, որ ընդհանուր շտաբի ստացած վերջին, դեռ ևս չը ստուգված տեղեկութիւնների համեմատ, ռուսները Տէլինի մօտ նոր մեծ պարտութիւն կրեցին, կորցնելով իբր թէ իրանց արտիլէրիայի և մթերքների վերջին մնացորդները։ Նոյն հաղորդագրութեան մէջ, որպէս հեռագրում են «Times» լրագրին Պետերբուրգից, ասված է, որ ճապօնացիները կտրել են երկաթուղային հաղորդակցութիւնը Ջանտաֆուից դէպի հիւսիս։ Կորած են մինչև 80 թնդանօթ։ Տէլինի մօտ եղած կռւի մէջ մեր կողմից սպանվել և վիրաւորվել են մինչև 10 հազար։ Հաղորդում են էլի, որ ճապօնական ռումբերից այրվեց ռուսների գրաւած գիւղերից մէկը, այնպէս որ այրվեցին շատ պաշարներ և վնասվեց ռազմամթերքի նշանաւոր քանակութիւն, որ ստիպված եղան թողնել։ «Petit Journal» լրագրի Պետերբուրգից, ճիշդ աղբիւրից ստացած տեղեկութիւնների համեմատ, գեներալ Կուրօպատկին վաղուց արդէն հեռագրել էր, որ նա հնարաւոր չէ համարում մնալ Տէլինում, ուր նրան շատ են նեղում ճապօնացիները, սպառնալով կտրել հաղորդակցութիւնը Խարբինի հետ, և որ նա միայն ընդամենը 100 հազար մարդ ունի, որոնք կազմակերպված են և ընդունակ են զէնք կրել։ (Нов.) (Тлф.)

Ռուսների նոր նախագիծը։ «Matin» լրագրի Տօկիօի թղթակիցը հեռագրում է, որ պաշտօնական աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, ռուս գերիների թիւը Ճապօնիայում, մինչև մուկդէնեան կռիւը, էր. 7 գեներալ, 661 օֆիցէր և 30,248 զինւոր։ (Тлф.)

—«Berliner Tageblatt» լրագրի տեղեկութիւնների համեմատ, ճապօնական հետեւակ զօրքի մի զօրեղ զօրասիւն արշաւում է երկաթուղու արեւմտեան կողմը հիւսիսային ուղղութեամբ՝ մեր զօրքերի ճանապարհը դէպի Խարբին կտրելու համար։ (Тлф.)։

—«Lokal Anzeiger» լրագիրը հաղորդում է հետեւեալ մանրամասնութիւններ նոր հովերի և ծրագիրների մասին ղեկավարող զինուորական շրջաններում. բանակը Լենեվիչին յանձնելը ժամանակաւոր միջոց է համարվում։ Հէնց որ պատերազմական կուսակցութիւնը վերջնականապէս գերակշռութիւն կը ստանայ և կը վճռվի 400 հազար մարդ ուղարկել պատերազմական բեմը, զօրքերի հրամանատարութիւնը կը ստանձնէ Մեծ Իշխաններից մէկը։ Պատերազմական նոր պլան դեռ ևս չէ մշակված, բայց ժամ առ ժամ փոփոխութիւնների կարելի է սպասել վերոյիշեալ ուղղութեամբ։ Պատերազմի պլանը այժմ կայանում է զօրքերը դէպի Սիբիր յետ քաշելու մէջ՝ ճապօնացիների համբերութիւնը և նիւթական միջոցները սպառելու համար։ Այդ նպատակով ռուսները պատրաստ են զոհել Խարբինը, կատարելապէս համոզված լինելով, որ ճապօնացիները չեն կարող մէկ ամբողջ տարի զօրքեր պահել Մանջուրիայում պատերազմական դրութեան մէջ։ (Нов.) (Тлф.)

—«Central News» լրագրի տեղեկութիւնների համեմատ, մարշալ Օյամա դիտաւորութիւն ունի բաժանել իր զօրքը երկու մասի. մէկը, 100,000 մարդուց բաղկացած, գեներալ Նօգիի հրամանատարութեան տակ, Տօգօի նաւատորմի օգնութեամբ կը պաշարէ Վլադիվոստոկը, միւսը, 250,000 մարդով, Օյամայի հրամանատարութեամբ, կը շարունակէ հալածել յետ նահանջող ռուսական բանակը։ (Нов.)

—Այն տունը Մուկդէնում, ուր ժողովված էին գեներալ Կուրոպատկինին մատուցված ընծաները և պատկերները Ռուսաստանի բոլոր ծայրերից, քարուքանդ է արված, իսկ պատկերներն ուղարկված են Տօկիօ։ (Русск. Газ.)

Գեներալ Դրագօմիրովի կարծիքը. «Neue Freie Presse» լրագրին հեռագրում են Պետերբուրգից. «Զինուորական խորհրդի վերջին նիստի մէջ գեներալ Դրագօմիրով մի երկար ճառ արտասանեց, որի մէջ յայտնեց, որ զինուորական վարչութեան ղեկավարները հէնց սկզբից փչացրին ամբողջ գործը, ուղարկելով պատերազմական գործողութիւնների բեմը պահեստի, կուլին անպատրաստ զօրքեր։ Նախ և առաջ հարկաւոր էր բոլոր գվարդիան ուղարկել ամբողջապէս։ Մինիստրի այն հարցին, թէ այն ժամանակ ո՞վ կը պաշտպանէր Պետերբուրգը, գեներալ Դրագօմիրով պատասխանեց, թէ գվարդիայի գործը չը խաղաղացնել աւազակներին և կողոպտողներին։ Գվարդիան պարտաւոր է պատերազմի մէջ Արքայական բոլոր զօրքերի առջևից գնալ և օրինակ ցոյց տալ նրանց։ Եւ հեծեալ գվարդիական գնդերի ծանր հեծելազօրքը կարող էր օգտաւէտ լինել որպէս գրաւված քաղաքների բերդապահ։ Ես գիտեմ,—ասեց գեներալը,—որ ժամանակն այժմ ծանր է, բայց չէ՞ որ խօսքը նրա մասին է, թէ արդեօք կը կարողանանք պահպանել կայսրութեան պրեստիժը, թէ հայրենիքը պէտք է ստորանայ։ Յուզմունքները բանւորների միջև չը խաղաղվեցին, սակայն Ռուսաց Ցարը շատ հաւատարիմ հպատակներ ունի։ Ռուս ժողովրդին խաղաղացնելու համար թնդանօթներ հարկաւոր չեն, այլ մտրակներ և հրացաններ, այդ բանը կարող են կազակներն անել, իսկ գվարդիան, գրենադերներին, Թուրքեստանցիներին և Կովկասեան կորպուսները պէտք է պատերազմական բեմն ուղարկել։ Ապա գեներալ Դրագօմիրով մատնացոյց արեց, թէ անհրաժեշտ է գլխաւոր հրամանատար նշանակել Մեծ Իշխաններից մէկին և ընդհանուր շտաբը բիւրօկրատիական հիմնարկութիւնից դարձնել կատարող օրգան, որը ընդունակ լինի գլխաւոր հրամանատարի ցանկութիւններն իրագործել։ (Нов.)

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Արդաբիլի դեսպետ Միրզա-Ալի-Աքպար աղայի քարոզը

Արդաբիլ, մարտի 4-ին

Բագուի սարսափելի կոտորածը մեծ իրարանցում պատճառեց և այստեղ՝ մահմեդական ամբոխի մէջ։ Ընդհանուր դասակարգին տիրել էր վրէժխնդրութեան ոգին։ Ամեն կողմ տարածվել էր մահաւիթ սարսափ, շշուկ ու աղմուկ։ Պատրաստվում էր գաղտնի խորհրդակցութիւն մի բուռն (25 տնից բաղկացած) հայերին բնաջինջ անելու, նրանց ինչքը կողոպտելու համար։ Իրագործման կէտը մօտենալու վրա էր, երբ պ. Գաբրիէլ Խ. Շահբազեանցը (ինչպէս և շատ դէպքերում) դիմելով նախ՝ փոխ-նահանգապետին և ապա դեսպետ Միրզա-Ալի-Աքպար աղային՝ պաշտպան հանդիսացաւ։ Նախ քան առաջինի անմիջական միջոցներ ձեռք առնելը, դեսպետը շտապեց «Շէյխ» կոչված մզկիթում քարոզել բազմամբոխ ժողովրդին հետևեալը. «Դուք, Բանդէի մուսուլմաններ, երկար դարերից ի վեր հայ տարրի հետ ապրել էք խաղաղ ու երջանիկ։ Հայ ազգը, թէպէտ և կրօնքով տարբեր, սակայն միշտ եղել է մեզ հետ իբրև հարազատ եղբայր։ Մենք չը պիտի վշտանանք ու վրէժխնդիր լինենք Բագուի դէպքից, որը առաջացել է կոյր ֆանատիկոսութիւնից, այլ պիտի ի նկատի ունենանք այն ջերմ եղբայրական յարաբերութիւնները և այն սիրալիր յարգանքները, որ վայելել ենք այդ ազգից։ Իմ աքսորման միջոցին ձեզնից և ոչ մէկը չը խնամեցիք իմ թշուառացած ընտանիքին, իսկ հանգուցեալ Խաչատուր Շահբազեանցն էր, որ հայրաբար խնամեց ու ամոքեց թէ իմ և թէ ընտանեացս ցառնաղէտ վիճակը։ Ասացէք, խնդրեմ, ո՞վ չէ վայելել պ. Շահբազեանցի անթիւ բարիքը։ Նա, անխտրաբար, կերակրում էր սովեալներին, ազատում էր բանտարկեալներին ու մխիթարում վշտանկեալներին ու նեղեալներին։ Ո՜րչափ տներ այսօր կանգուն են և իրանց գոյութեամբ իբրև կենդանի վկաներ այդ հանգուցեալի բարեգործութեան *)։ Եթէ նոյն իսկ ոչ թէ Բագուն միայն, այլ և աշխարհը աշխարհով անցնի, մենք պիտի երախտապարտ հոգով յիշենք ընդ միշտ Շահբազեանցի յիշատակը և յարգենք հայութիւնը։ Ուրեմն, մենք փոխանակ պաշտպանելու հայերին, թող չը տոգորվենք եղբայրասպան մտքերով։ Այդ չէ հրամայում մեր մեծ մարգարէն ու նրա աստուածադիր օրէնքը։ Ինչպէս մինչև այսօր, նոյնպէս էլ և այսուհետև պիտի կրկնենք մեր եղբայրական սերտ յարաբերութիւնները հայերի հետ...»։

Դեսպետի այդ քարոզը էլէքտրական լարի պէս ցնցեց իր հաւատացեալներին, տարածվեց ամբողջ նահանգը և խաղաղութեան հրեշտակը թևաբացեց բոլորի վրա **)։

Յ. Օրբէլեանց

II

Ռաշտ, մարտի 6-ին

«Առաջին ցուցարարը, առաջին խռովարարը պէտք է տեղն ու տեղը պատժվի»—ահա մեր երկրի ողորմած միապետի խիստ հրամանը։

Վերջացան կրօնական հանդէսները բոլորովին խաղաղ և անվրդով։

Պարսիկը ամենայն սիրով իր դարաւոր բարեկամական յարաբերութիւնները աւելի ևս ամրացրեց մեզ հետ։

Երևակայիր, ընթերցող, միթէ կարող էր պարսիկը ատել հային, քանի որ Վեհափառ Շահը՝ պարսկահայերի հայրը, միշտ բարեխնամ է դէպի իր սիրելի հաւատարիմ հայը։

Որ պարսիկը բարձր է Բագուի թուրքից, դա այբուբենական ճշմարտութիւն է, որ պարսիկը մտածող և հեռուն նախատեսող է, դրան փաստ կարող է ծառայել Բագուի դէպքը, որը նա շատ խելօք քաղաքականութեամբ քննադատում է, և զզուանքով երես դարձնում թուրքից։

Մեր կողմերում անխորժ ինտրիգները ի հարկէ, տեղացիներից չէին սպասվում, այլ Բագուի թուրքերից, որոնցից, դժբաղդաբար, որոշ թւով գտնվում են այստեղ։ Բացառութիւնը (եթէ կայ) յարգելով, մենք միացածների մասին այսքանը կարող ենք ասել, որ այդ ինտրիգաների սիրահար խրտուիլակները չէին երազում, որ Արեգակնափայլ Շահնշահի երկիրը իրանց համար շատ նեղ է, որովհետև այստեղ պատիժը՝ բանտը չէ, այլ միւս աշխարհը։

Կովկասի հայ եղբայրներ, մայրեր և քոյրեր, օրհնեցէք մեզ հետ միասին ողորմած Շահնշահին, թող Աստուած նրան պարգևէ երկար կեանք և առողջութիւն, ի բարօրութիւն և ի հանգստութիւն ձեր հարազատ հայ եղբայրների։

Կովկասի հայ հոգևորականութիւն, ձեր սուրբ պարտքը թող լինի ամեն օր յիշել Իրանի միապետին ձեր աղօթքների մէջ։ Մի մոռանաք, որ նա ձեզ միշտ գնահատել է իր երկրում։

Նամակս վերջացրել էի, երբ ինձ պատահեցին Էնզելիից եկած ճանապարհորդներ, որոնք պատմում էին, որ այնտեղ կառավարութիւնը թոյլ չէ տուել Բագուի թուրքերին Մօհարրեմի արիւնահեղ հանդէսը հրապարակով կատարել, այլ բոլորին փակել է մզկիթի մէջ և թոյլատրել է այնտեղ միայն կտրել գլուխները։ Ահա մի փաստ ևս։

Ասում են նաև, որ այդ օրը այնտեղի ռուսները, վախենալով այդ օրվայ կատարվելիք կրօնական հանդէսներից, քաշվել էին նաւերի մէջ և այնտեղ մնացել մի գիշեր. մեր լաւագոյն կարծիքն է, որ այդ աւելորդ էր, քանի որ հայերը, վստահ կառավարութեան պաշտպանութեան վրա, ոչ մի արտաքոյ կարգի փոփոխութիւն չէին տուել իրանց սովորական կեանքին։

Արշակ Ռշտունի

III

Ռաշտ, մարտի 7-ին

Այստեղի կովկասեցի թուրքերի մէջ գրգռումները քանի գնում շատանում են և աշխատում են ազդել պարսից ազգաբնակութեան վրա։

Կառավարութիւնը արդէն երկու շաբաթ է սկսել է լուրջ միջոցների ձեռնարկել և երկու վաշտ հեծելազօր արդէն Թէհրանից ուղարկված է։

Տեղիս հայերը վախենում են ամեն ժամ անկարգութիւններից։ Արքայազն դատաւորը հրամայեց Մուհարամի երկու օրերը խանութները փակել, որպէս զի առիթ չը տան որ և է անպատեհութեան։ Պարսից փողոցային թափորների ժամանակ կարգը չը խանգարելու համար շարված էին զինուորներ։ Թաւրիզից և Թէհրանից յուզիչ լուրեր են գալիս։

Երէկ տեղիս եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Բագուի նահատակների համար, որի ընթացքում քարոզիչ քահանան վերագրեց այդ «ազգային մեղքերի»։

Աւելորդ չեմ համարում նոյնպէս յայտնել տեղիս նորակազմ «Ինքնակրթական» ընկերութեան տուած երեկվայ ձրի դասախօսութեան մասին։ Նիւթն էր «Առաջադիմութեան թէօրիան»։ Դասախօսութիւնը անցաւ աջող։

Ս. Ա. Դրվադեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն ուկազ Ֆինանսների մինիստրին. «Պետական գանձարանի միջոցներն ուժեղացնելու համար, որ անհրաժեշտ են Ճապօնիայի դէմ վարած պատերազմից առաջացած ծախքերը ծածկելու համար, բարւոք համարեցինք Մենք, համաձայն ձեր դիմումի, որ քննված է ֆինանսների կօմիտէտում, ձեռնարկել ներքին փոխառութեան հրատարակման։ Այդ նպատակով հրամայում ենք ձեզ հրատարակել ձեր որոշած կարգով ու աստիճանաւորութեամբ 3 տոկոսանոց փոխառութիւն 200,000,000 րուբլու անուանական արժողութեամբ՝ հետևեալ հիմքերով. 1) Այդ փոխառութիւնը ներմուծվելու է պետական պարտքերի գրքի մէջ 1905 թւի 5$^0/_0$-ոց փոխառութիւն անունով։ 2) Այդ փոխառութեան օբլիգացիաները լինելու են անուանական և հասարակ՝ 100, 200, 500, 1,000 և 5,000 րուբլու արժէքով։ 3) Անուանական օբլիգացիաների, նրանց մէկ մարդուց միւսի ձեռքն անցնելու և նրանց ոչ անուանականներով փոխանակելու կանոնները պէտք է դուք մշակէք։ 4) Օբլիգացիաների եկամուտի չափը որոշվում է 5$^0/_0$ տարեկան, որ վճարվելու է կէս տարին մի անգամ—մարտի 1-ին և սեպտեմբերի 1-ին, օբլիգացիաների կուպօնները ցոյց տուողին պետական բանկի գրասենեակներում, իսկ ուր այդպիսիները չը կան, պետական գանձարանում։ Տոկոսների հաշիւն սկսվում է ներկայ մարտի 1-ից։ 5) Օբլիգացիաների տոկոսների վճարումը ընդմիշտ ազատում է դրամական կապիտալների եկամուտների տուրքերից։ 6) Կուպօնները վճարման ենթակայ են նրանց ժամանակամիջոցը հասնելուց յետոյ 10 տարվայ ընթացքում, իսկ օբլիգացիաները՝ 30 տարվայ ընթացքում, հաշուելով կապիտալը վճարելու համար նշանակված օրից։ 7) Այդ փոխառութեան օբլիգացիաները անուանական գնով 49 տարում շիջուցանելու համար կազմվում է յատուկ շիջուցման ֆօնդ։ 8) Շիջուցման ենթակայ օբլիգացիաների տիրաժները կատարվում են ամեն տարի նոյեմբերին, սկսելով 1905-ի նոյեմբերից։ Տիրաժ ընկած օբլիգացիաների գինը վճարում են ամեն մի տիրաժից 3 ամիս յետոյ։ 9) Մինչև 1917 թ. մարտի 1-ը՝ 7-դ կէտում որոշված այս փոխառութիւն շիջուցանող գումարը չը պէտք է մեծացվի, նոյնպէս և մինչև այդ ժամանակը չէ ձեռնարկվելու ոչ այդ փոխառութեան յետ գնմանը, ոչ էլ ուրիշ արժէքների վերածվելուն կամ կօնվէրսիային։ 10) Այն իրաւունքները և առաւելութիւնները, որ տրվում են ներկայ փոխառութեան օբլիգացիաներին՝ նրանց ընդունելու վերաբերութեամբ իբր պետական գրաւական և իբր ապահովութիւն ակցիզային վճարների, դուք պէտք է որոշէք այդ փոխառութեան հէնց սկզբից»։ Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է «ՆԻԿՈԼԱՅ» և ֆինանսների մինիստրը գրել է. «Ցարսկոէ-Սէլօում, 1905 թւի մարտի 12-ին. Ֆինանսների մինիստր պետական քարտուղար Վ. Կօկօվցեվ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստրի կարգադրութիւնը. «Ի կատարումն Բարձրագոյն Անուանական ուկազի, տրված 1905 թւի մարտի 12-ին, ֆինանսների մինիստրը սրանով յայտարարում է ի գիտութիւն ամենքի. 1) 1905 թւի 5$^0/_0$-նոց ներքին փոխառութեան ընդհանուր գումարի մէջ, 200,000,000 ր. անուանական արժէքով, կիրականացվեն 100,000,000 ր. անուանական գումար հասարակական ստորագրութեան միջոցով պետական բանկի գրասենեակում և բաժանմունքներում և հետևեալ մասնաւոր կրեդիտային հիմնարկութիւններում. Վօլգա-Կամայի առևտրական բանկում, Պետերբուրգի միջազգային առևտրական բանկում, Պետերբուրգի զեղջող-փոխատու բանկում, ռուս-չինական բանկում, Մոսկվայի վաճառականական բանկում, նոյն տեղի զեղջող բանկում, ազով-դոնեան առևտրական բանկում, Պետերբուրգի մասնաւոր առևտրական բանկում, Պետերբուրգի ռուսական առևտրա-արդիւնաբերական բանկում, հիւսիսային բանկում, Գ. Վավէլբէրգի բանկիրական տանը Պետերբուրգում և Վարշավայում, Վ. Ինկէր և ընկ. բանկիրական տանը, Եղբ. Ժամհարեանների բանկիրական տանը։ 2) Ստորագրութեան պայմանները կը յայտարարեն յիշեալ հիմնարկութիւնները իրանց յայտարարութիւնների մէջ։ Ներքին 1905 թւի 5$^0/_0$-նոց փոխառութեան օբլիգացիաները, նոյնպէս և նրանց ժամանակաւոր վկայաթղթերը կընդունվեն ամեն մի կէս տարում ֆինանսների մինիստրի որոշած գներով իբր գրաւական. ա) պետական կապալների և մատակարարութիւնների գործերում, բ) յետաձգված ակցիզների վերաբերութեամբ և գ) մաքսատների մաքսերն ապահովելու մէջ»։ Ստորագրել է ֆինանսների մինիստր պետական-քարտուղար Վ. Կօկօվցեվը։

Յիշված փոխառութիւնն իրականացնելու գործն իր վրա է առել ռուսական բանկերից կազմված կօնսօրցիումը։

13 մարտի

ԼՕՆԴՕՆ, 11 մարտի։ Մեծ հետաքրքրութեամբ քննադատում են Մէշէդի խառնակութիւնները ռուսների դէմ։ Վախենում են, թէ ուրիշ եւրօպացիներ էլ յարձակման կենթարկվեն Պարսկաստանում։ Շահի իշխանութիւնը հիւսիսային Պարսկաստանում այնքան թոյլ է, որ հազիւ թէ նա կարող լինի ճնշել որ և է ժողովրդական շարժում։

Գերմանական «Մինխէն» շոգենաւը վարձված է յատկապէս պօրտ-արտուրցիներին Օդեսսա տեղափոխելու։

Ճապօնական փոխառութիւնը, որի ստորագրութիւնը Լօնդոնի բանկիրները մտադիր են բաց անել մարտի 16-ին, արդէն բօրսայում 2$^0/_0$ պրէմիա է տալիս։

ՄՕՍԿՎԱ, 12 մարտի։ Մարտի 20-ից սկսած պատերազմի դաշտից կը բերեն Իրկուտսկ օրական 800 հիւանդ և վիրաւոր զինուորներ Ռուսաստան տանելու համար։—Նահանգական ժողովը որոշել է խնդրել, որ լրագրական հաշիւները զեմսկի ժողովների մասին առանց ցենզուրայի հրատարակվեն։ Հաշւեկշիռը հաստատված է 2,200,000 ր.։

Համալսարանի չունևոր ուսանողներին օգնելու ընկերութիւնը հնարաւոր համարեց վճարել միայն այն ուսանողների ուսման վճարը, որոնց արձակվելուց յետոյ սպառնում է զինուորութիւնը. միւսների համար ընկերութիւնը խնդրելու է, որ ազատեն վճարից։

ԿՈՒՐԳԱՆ, 12 մարտի։ Աշակերտներին խնամող ընկերութիւնը որոշեց խնդրել, որ ծնողների մասնակցութեամբ քննութիւն նշանակվի գիմնազիայում պատահած այն դէպքերի առիթով, որոնք յուզում են քաղաքը։

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 12 մարտի։ Գարնանը Էդուարդ թագաւորը կը գայ երկար ժամանակով։ Ալէքսանդրա թագուհին արդէն սպասվում է Քրիստիանա թագաւորի ծննդեան օրը։

ՀՌՈՄ, 12 մարտի։ Գերմանական կայսրուհին ժամանեց Ջիվիտա-Վէկկիա կէսօրից յետոյ։ Արքայական զոյգը գնաց այնտեղ կայսրուհուն ողջունելու համար։

13 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ինֆանտէրիայի գեներալ Գրիպպէնբէրգ արձակվում է բանակի հրամանատարի պաշտօնից, պահելով գեներալ-ադիւտանտի կոչումը։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը հնարաւոր համարեց կարգադրութիւն անել, որ սրանից յետոյ, մինչև պատերազմական գործողութիւնների վերջանալը Հեռաւոր Արևելքում, Կարմիր Խաչի ընկերութեան վկայականներով պատերազմական գործողութիւնների բեմից ուղարկվող վիրաւոր և հիւանդ օֆիցէրներին իրաւունք տրվի սիբիրեան երկաթուղուն պատկանող սիբիրեան արագ գնացքներում ձրիաբար ունենալ 2-դ կարգի մէկից մինչև երեք բաժանմունքը։ Այդ արտօնութիւնը տրվում է այն պայմանով, որ նախապէս համաձայնութիւն կայանայ Կարմիր խաչի ընկերութեան լիազօրների և սիբիրեան երկաթուղու գլխաւորի միջև այն մասին, թէ օֆիցէրների ո՞րքան թիւ կարելի է ուղարկել այդ ինչ արագ գնացքով։

ԿԻԼ, 12 մարտի։ Պրինց Հէնրիխի ամուսինը՝ Ջանկից յետոյ մի քանի շաբաթ կը գայ Ցարսկոէ Սելօ։

ՄԻՆՍԿ։ Զէմստվօի տնտեսութեան գործերը վարող նահանգական կօմիտէտը վարչութեան տրամադրութեան տակ դրեց 25,000 ր. հակախօլերային միջոցների համար։ Վճռված է մեծացնել բժիշկների թիւը լրացնելով կազմը բարձր կուրսի ուսանողներով, կազմակերպել գաւառական սանիտարական խմբեր և տարածել ազգաբնակութեան մէջ տեղեկութիւններ խոլերայի մասին։

---

* Պարսից շարիաթով հային «ռահմաթ» ասելը մահացու մեղք է համարվում, միայն հանգուցեալը բացառութիւն է կազմում։

** Այդ դեսպետը Պարսկաստանի ամենաժողովրդական դեսպետներից մէկն է համարվում։ Յ. Օ.

ՆՕՎՕՈՒԶԷՆՍԿ։ Զեմստվօի վարչութեան կից տնտեսական խորհուրդը գիւղական հասարակութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ որոշեց խնդրել զեմստվօին միջնորդութիւն յարուցանել, որպէս զի տարրական ուսումը ամբողջապէս զեմստվօի իրաւասութեան ներքոյ դրվի, արքունական հողից կտորներ տրվի տեղական սակաւահող հասարակութիւններին, արգելելով ուրիշ նահանգների գաղթականներին գաղթել Նօվօուզէնսկի գաւառը, կանօնաւորվի արքունական հողի կապալավարձը և շուտափոյթ ազատվի գիւղական ազգաբնակութիւնը գոյութիւն ունեցող վարչական խնամակալութիւնից, որը արգելում է ազգաբնակութեան ինքնագործունէութեան զարգացումը։

ՄՕՍԿՎԱ, 12 մարտի։ Մանկավարժական ընկերութիւնը իր նիստի մէջ անհրաժեշտ համարեց պաշտպանել մանկավարժական խորհուրդներում, գրականութեան մէջ և ժողովներում սովորողների տենչանքները, որոնց նպատակն է վերացնել ռուսաց դպրոցի պակասութիւնները։ Ընկերութիւնը հիմնում է յանձնաժողով մի քանի պրօֆէսօրների մասնակցութեամբ պետական կատարելագործութեան նախագիծը մշակելու համար։

ՊԵՏՐՕՊԱՎԼՕՎՍԿ, 13 մարտի։ Կայացաւ գործակատարների առաջին ժողովը իրանց դրութեան բարւոքման պայմանները քննելու համար։

ՍՕՖԻԱ։ Պարզված է, որ Վիտօշ լեռան վրա դինամիտի պայթիւնից սպանված երկու հայեր ապրում էին Սօֆիայում «Բօլգարիա» հիւրանոցում։ Մէկը անուանել էր իրան բէլգիահպատակ, տալով Ժօրիս հնարովի ազգանունը։ Սպանվածների մօտ, ոչ էլ նրանց իրերի մէջ չէ գտնված ոչ մի դօկումէնտ։ Այդ բանը շատ է դժուարացնում գործի քննութիւնը։

ՊԱՐԻԶ, 5 մարտի։ Հնդկական ովկիանոսում կատաղի ցիկլօն էր. Մատագասկարում, Մանանժարի տեղում վնասաված են շատ շինութիւններ և մի քանի գիւղեր։ Հեռագրական հաղորդակցութիւնը Դիէգօ-Սուարէզի և կղզու հիւսիսային մասի հետ ընդհատված է։

ՀՌՕՄ։ Տիտտօնի յանձնեց Թագաւորին ամբողջ կաբինէտի հրաժարականի խնդիրքը և հաղորդեց ապա նրան պատգամաւորների ժողովին, որը յետաձգեց նիստը։ Կարծում են, որ նոր մինիստրութիւնը կը կազմեն Ֆօրտիս և Տիտտօնի՝ նախկին կաբինէտի մեծ մասի հետ։

ԼԻՍՍԱԲՕՆ։ Մեծ պատրաստութիւններ են տեսնվում Վիլհէլմ կայսրին դիմաւորելու համար։ Անգլիական Թագուհին ուղևորվեց Կադիքս, ուր կը ժամանէ ծպտեալ կերպով և կայցելէ Պարէզի կոմսուհուն։

ՎԻԼԼԱՄԱՆՐԻԿԷ։ Զվիտտա-Վէկկիա եկաւ «Հօհէնցօլէրն» զբօսանաւը գերմանական կայսրով և Էյտէլ ու Օսկար պրինցներով. ժամանեցին նոյնպէս իտալական Թագաւորը և Թագուհին և ողջունեցին կայսրուհուն կայսերական զբօսանաւի վրա։ Իտալական արքայական զոյգը, հեռանալով զբօսանաւից, վերադարձաւ Հռօմ։

ԹԱՒՐԻԶ։ Հայ ազգաբնակութիւնը շատ երկիւղի մէջ է, որովհետև, հասած տեղեկութիւնների համեմատ, անկարգութիւններ են սկսվել հայերի և պարսիկների միջև Ուրմիայում։

ԽԱՐԿՕՎ։ Մարտի 28-ին մտադրութիւն կայ քննութիւններ սկսել Խարկօվի համալսարանի բժշկական քննիչ յանձնաժողովի մէջ։ Քննվել ցանկացողներին առաջարկված է այժմ և եթ տալ խնդիրներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ինֆանտէրիայի գեներալ Լենևիչի ամենահպատակօրէն հեռագիրները Նորին Կայսերական Մեծութեան Անունով։ 1) 8 ժամ 14 րօպէ կէս գիշերից յետոյ. «Լոյս այսօրվայ գիշերը հանգիստ անցաւ»։—2) 6 ժամ 50 րօպէ կէսօրից յետոյ. «Այսօր փոփոխութիւններ չը կային բանակների մէջ։ Դէպի Շուանմեաուզայի կայարանը մտնում են հակառակորդի մանր խուզարկու խմբերը»։

13 մարտի

ՄՕՍԿՎԱ, 13 մարտի։ Կանայքը, որոնք յայտարարութիւն տուեցին Մօսկվայի նահանգական զեմստվօի ժողովին իրանց իրաւունքները տղամարդկանց հետ հաւասարեցնելու մասին, վճռեցին նոյնանման պահանջ ուղարկել բոլոր նահանգական զեմստվօների ժողովներին։—Զինուորական-նահանգական բժշկական վարչութեան մէջ, զինուորական բժիշկների խնդիրքով, հիմնվում է յանձնաժողով՝ զինուորական ծառայութեան մէջ ընդունելու ժամանակ զինուորական հիւանդանոցում տեղի ունեցող զննումները քննելու համար։ Մօսկվայի մանկավարժական ընկերութիւնը ընդհանուր խորհրդի մէջ անհրաժեշտ ճանաչեց, որ Լեհաստանի Թագաւորութեան լեհական դպրոցներում դասատուութիւնը լեհերէն լեզուով լինի։

ՀԱԱԳԱ։ Կառավարութիւնը Վենեցուէլա է ուղարկում երկու պատերազմական նաւ, ստիպելու համար նախագահ Կաստրօին կատարել Նիդէրլանդների պահանջները։

ՍՕՖԻԱ։ Մակեդօնական շարժման պարագլուխներից գլխաւորները՝ գեներալ Ցօնչէվ, գնդապետ Եանկօվ և փոխ-գնդապետ Նիկօլաեվ վճռական հարուած են նախապատրաստում։ Մանրամասնութիւնները գաղտնի են պահվում։

ԲԷԼԳՐԱԴ։ Զինուորական մինիստրի հրամանի համաձայն, թնդանօթներ, զէնք և ռազմամթերքներ հայթայթելու վերաբերեալ բանակցութիւնները սրանից յետոյ պէտք է կատարվեն ոչ թէ գործակալութեան միջոցով, այլ անմիջապէս համապատասխան գործատների հետ։

ԲԷԼԳՐԱԴ։ «Պօլիտիկա» լրագրում մի օֆիցէր յայտարարում է, որ օֆիցէրների ամբողջ կազմը պատրաստ է մասնակցել մակեդօնական ապստամբութեան մէջ, բայց կառավարութիւնից նախապէս ցուցմունքներ է պահանջում գործունէութեան եղանակի վերաբերմամբ։

ԿԱՆԷՅԱ։ Վաղուց արդէն գոյութիւն ունեցող դժգոհութիւնը պրինց Գէօրգիի դէմ այժմ ակնյայտ երևան եկաւ։ Տեղի ունեն արիւնահեղ ընդհարումներ ժանդարմների և ապստամբների միջև, այդ պատճառով միջազգային զօրքերի հրամանատարը օժանդակ զօրք է խնդրում։

Կ. ՊՕԼԻՍ։ Աւստրիական էսկադրայի հրամանատար ծովապետ Պետրուսկի երէկ ճանապարհ ընկաւ Կ. Պօլսից իր ավիտայով Սուլթանի գվարդիայի 20 ալբանական օֆիցէրներ և ունտէր-օֆիցէր ուղևորվեցին Ալբանիա, ուր մեծ շարժում է պատրաստվում։ Իլդիզում ծառայող մնացած ալբանցիները մտադրութիւն ունեն հետևել նրանց։

14 մարտի

ՏՕԿԻՕ, 13 մարտի։ Պաշտօնական։ Խսինկինում գտնվող ռուսական ոյժերը յետ նահանջեցին դէպի Սոյլունչէն, 90 մղոն դէպի հիւսիս-արևելք, Զանտուի մօտ։—Նինչիացզիում, 23 մղոն դէպի հիւսիս-արևելք նորերս ճապօնացիների գրաւած Ցակումէնից, ռուսների համարեա ոչ մի հետք չը կայ։ Պատահում են միայն աննշան զօրախմբեր։

ԳՈՒՆԶԺՈՒԼԻՆ (Բեռլինի վրայով)։ «Կեօլնի Լրագրի» տեղեկութիւնների համեմատ, ճապօնացիների արշաւողական շարժումը ստիպում է ենթադրել, որ նրանք դիտաւորութիւն ունեն յարձակում գործել ռուսական զօրքերի վրա։ Զօրեղ շրջապատոյտ շարժումը արևելքից բացատրվում է որպէս արշաւողական շարժում Գիրինի վրա։ Ճապօնացիների ենթադրեալ գործողութիւնները Վլադիվօստօկի դէմ երևի միայն պատերազմական ցոյց են։ Մարտի 10-ին Լօէպինդէնի մօտ տեղի ունէր կռիւ։ Լրագրի կարծիքով, Օյաման անդափոխում է իր զօրքերը դէպի արևելք երևի Վլադիվօստօկի և Խարբինի միջև հաղորդակցութիւնը կտրելու դիտաւորութեամբ։ Արևելեան կողմը գտնվում են ճապօնական նշանաւոր ոյժեր, արևմուտքում—զօրեղ հեծելազօրք։

ՄՕՍԿՎԱ։ Ուսուցչական ինստիտուտի 70 ունկնդիրներից 30 վերսկսեցին պարապմունքները։ Գործադուլ անողները խնդրում են կրկին ընդունել նրանց։—Այսօր քաղաքային դումայում հաւաքվեցին քաղաքային ուսուցիչներ, թւով 800 մարդ, այն հարցերը քննելու համար, որոնք վերաբերվում են քաղաքային ուսուցիչների իրաւական և նիւթական դրութեան։

ՎԻԲՕՐԳ։ Նահանգապետ Մեասօեդօվի առողջական դրութիւնը բարւոքվում է։ Վտանգն անցաւ։ Վիբօրգի նահանգապետի սպանութեան փորձ անողը չէ ծածկում և ասում է, որ յոյս ունի շուտով ազատվել բանտից կամ փախչելով քաղաքային հաւպտվախտից և կամ ընկերները կը պայթեցնեն։

ԿԻԵՎ։ Կայացաւ Կիևի, Պօդօլի, Չէրնիգօվի և Խէրսօնի նահանգների բժիշկների խորհրդակցութիւնը, որոնք եկել էին լսելու խոլէրայի մասին դասախօսութիւնները, որ կարդում են համալսարանի պրօֆէսօրները Կիևի բակտէրիօլօգիական ինստիտուտում։ Խորհրդակցութեան մէջ մասնակցում էին մի քանի պրօֆէսօրներ, հիւանդանոցներ կառավարող բժիշկները և սանիտարական բժիշկներ։ Մըտադրութիւն կայ կարճատև դասընթացքներ սարքել սանիտարներին սովորեցնելու համար։ Ցանկութիւն յայտնվեց ապահովագրել սանիտարների կեանքը։

14 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն ուկազ, տրված ներկայ մարտի տասներորդ օրը. «Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Կօնստանտին Կօնստանտինօվիչի ամուսինը, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Մավրիկիեվնան աղջիկ ծնեց, որի անունը դրվեց Նատալիա։ Հրամայում ենք Կառավարիչ Սենատին կարգադրութիւն անել, որ Կայսերական արիւն ունեցող այս նորածին իշխանուհին, սրան, որպէս Կայսրի թոռան աղջկան պատկանող տիտղոսով, ուր պատշաճ է, անուանվի Նորին Բարձրութիւն։ Իսկականի վրա Նորին Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է. «ՆԻԿՕԼԱՅ»։ Տրված է Ցարսկօե-Սելօում 1905 թւի մարտի 10-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժամանեց Հեռաւոր Արևելքից դուրս եկած հիւանդ և վիրաւոր զինուորների եօթերորդ խումբը։ Եկան 193 զինուորներ, այդ թւում 45 վիրաւորներ և 148 հիւանդներ. ընդամենը պատերազմի սկզբից Պետերբուրգ են եկել 1464 հիւանդ և վիրաւոր զինուորներ։

ԼՕՆԴՕՆ, 13 մարտի։ Տօկիօից ստացված հեռագրի համաձայն, այնտեղի լրագիրները եռանդով բողոքում են Հիւսիսային Ամէրիկայի Միացեալ-Նահանգների կառավարութեան այս օրերս կայացրած վճռի դէմ՝ չը թոյլատրել ճապօնական հպատակներին ամէրիկական հպատակութիւնն ընդունել։ Լրագիրները այդ միջոցը ստորացնող են համարում Ճապօնիայի համար, որը այլ ևս չէ ցանկանում ստոր ցեղ համարվել։

ՏԱՆԺԷՐ, 13 մարտի։ Մարօկկօի սուլթանը իր հօրեղբօրը՝ Մուլէյ-Աբդուլմալէկին նշանակեց իր ներկայացուցիչ, պատուիրելով նրան արտաքին գործերի մինիստրի հետ միասին ողջունել կայսրին։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Պաշտօնական։ Հաղորդված է, որ Էդուարդ Թագաւորը կայցելէ Քրիստիան Թագաւորին մարտի 26-ին։ Այդ տեղեկութիւնը մեծ սենսացիա յարուցեց, որովհետև՝ լինելով բոլորովին անսպասելի, երևում է, որ որոշումը յանկարծուստ է եղել։ Պաշտօնական շրջաններին մօտ կանգնած անձինք ենթադրում են, որ ներկայ դէպքում գործը վերաբերվում է Հեռաւոր Արևելքում խաղաղութիւն կապելու եղանակի հարցին։ Էդուարդ Թագաւորի գալու տեղեկութիւնը մեծ ուրախութիւն յարուցեց Դանիայում. խօսում են խաղաղութեան մասին։ Մանաւանդ որ մեծահարգ, աչքի ընկնող պետական անձի համբաւ վայելող Էդուարդ Թագաւորը կարող է հզօր ազդեցութիւն գործել հարցի բարեհաջող վճռի վրա։

ՇԷՐԲՈՒՐԳ։ Մի աննշան ռուս գիւղի բնակիչներ, թւով 130 հոգի, քահանայի ուղեկցութեամբ, ժամանեցին տեղս, որ ճանապարհ ընկնեն Բուէնօս-Այրէս։

ՀՌՕՄ։ «Տրիբունա» լրագիրը հաւատացնում է, որ Վիլհէլմ կայսրը կը ժամանէ Նէապօլ մարտի 23-ին և երեք օր կը մնայ իր եղբօր՝ պրինց Ադալբէրտի հետ, ապա կայսրը կը հանդիպէ կայսրուհուն Սիցիլիայում։ Լրագիրը կարծում է, որ կայսրի տեսակցութիւնը իտալական Թագաւորի հետ կը կայանայ Նէապօլում։

ՄԱԴՐԻԴ։ Ալէքսանդրա Թագուհին Մօդ և Վիկտօրիա պրինցուհիների հետ միասին «Վիկտօրիա և Ալբէրտ» զբօսանաւով ժամանեց Կադիքս։ Մեծ ամբոխը ջերմապէս ողջունեց եկողներին։ Թագուհին կէսօրից յետոյ ուղևորվեց Սէվիլլիա։

ՏՕԿԻՕ։ Մարտի 13-ին միկադօի հրատարակած ուկազով թոյլատրվում է 300 միլիօն իենի արտաքին փոխառութիւն անել։ Լրագիրները այդ փոխառութիւնը անվիճելի կերպով աւելի բարենպաստ են համարում նախկին փոխառութիւններից։ 1905—6 թւի համար մնում է 130 միլիօն իեն. առձեռն դրամը օբլիգացիաներով կը լինի. դժուարութիւններ չեն սպասվում, որովհետև ճապօնական բանկիրները նորերս խոստացան ստորագրվել հարիւր միլիօն իեն գումարի։

ՏՕԿԻՕ, 13 մարտի։ Մուկդէնում բռնված և մի քանի օր առաջ Տիցուօկա բերված պատերազմական թղթակիցները այսօր բաց թողվեցին։

ՇԱՆԳՀԱՅ։ Ճապօնացիները ծանուցին չինական արտաքին գործերի մինիստրութեան, որ ռուս դէզէրտիրներ թաքնված են Լեաօխէից դէպի արևմուտք գտնվող գիւղերում։ Հրամայված է յանձնել նրանց։ Չինացիները հաղորդում են, որ շատ ռուսներ, որոնց յետ նահանջումը դէպի Լեաօխէի արևմտեան ափը կտրված է, աշխատում են հասնել Շանգհայգուան։ Ուանշիկայ հրամանագրեց զօրքերին առանձնապէս հսկել։

ԿՕԲԷ։ «Դէլի Տէլէգրաֆ» լրագրի թղթակիցը հարց ու փորձ արեց ամէրիկական օֆիցէրներ՝ գնդապետ Հօվարդին և կապիտան Իւդսօնին, որոնք գերի էին ընկել ճապօնացիների ձեռքը Մուկդէնի մօտ փետրվարի 25-ին։ Այդ օֆիցէրները հաղորդեցին, որ դեռ փետրվարի 24-ին նրանք չէին կասկածում յետ նահանջման անխուսափելիութիւնը։ Պատերազմական թղթակիցներից շատերը Մուկդէնից վերջին գնացքով դուրս գալու ծանուցումը ուշ գիշերով ստացան։ Թղթակիցները ճանապարհ ընկան լուսաբացին, բայց Իւդսօնը, հիւանդ լինելով, մնաց։ Հօվարդ, որը նրա հետ միասին էր ապրում, նրան վիճակակից եղաւ։ Փետրվարի 25-ին սաստիկ վերջապահային կռիւ էր։ Վաղ առաւօտեան ճապօնացիները տիրեցին քաղաքին, որը ընդհանրապէս քիչ վնասվեց, և դա հետևանք էր միկադօի հրամանի՝ ըստ կարելւոյն խուսափել քաղաքի վրա կրակ թափելուց։ Ձեռք չէ տուած նոյնպէս կայսերական գերեզմաններին։ Գերմանացի և յոյն վաճառականները շարունակում են առևտուրը քաղաքում։ Լիտտլ, բարօն Կրիգլշտէյն, Նօդօ և Մակ-Կուլան թղթակիցները այսօր ժամանեցին այստեղ հեծելազօրքի ունտէր-օֆիցէրի ուղեկցութեամբ։ Նրանք յայտնեցին, որ իրանց հետ լաւ էին վարվում։ Նրանց ուղարկում են Տիցուօկա պահապան զինուորների ուղեկցութեամբ։ Թղթակիցները զարմացած են, որ զինադադար առաջարկված չէ եղել և չեն սկսել խաղաղութեան բանակցութիւնները։ Երեքօրեայ կռիւը ռուսական աջ թևի վրա հոյակապ էր իր յամառութեամբ։ Շատ գիւղեր չորս անգամ ձեռքից ձեռք էին անցնում. յետ նահանջման չէին սպասում, երբ յանկարծ ստացվեց Կուրօպատկինի հրամանը։ Պատերազմական թղթակիցները յայտնում են, որ ռուսական բանակի մէջ իրանց հետ արքայավել կերպով էին վարվում։

ՏՕԿԻՕ։ Խաղաղութեան լուրերին ճապօնացիք քիչ ուշադրութիւն են դարձնում։ Նրանց բոլոր մտածմունքները գլխաւորապէս ուղղված են դէպի այն, որ այժմ յամառութեամբ զոհեր տան, որպէս զի ապագայում ապահովութիւն ունենան ռուսական սպառնական քաղաքականութիւնից։ Պաշտօնական հեռագիրները հաղորդում են, որ ճապօնական զօրքերը անցան արհեստական արգելքներից և առաջ են ընթանում լայն ճակատով երկաթուղու երկու կողմերով. առաջապահ զօրքերը արդէն գտնվում են Մուկդէնից 100 մղոն դէպի հիւսիս։ Ռուսները բոլորովին մաքրել են Լեաօխէ գետի շրջանը։ 1200 տօնն ունեցող փոխադրիչ նաւը, որ ջրասոյզ էր եղած Պօրտ-Արտուրում, այսօր, երկու շաբաթ աշխատանքներից յետոյ, դուրս է հանված։—Նախատեսնում են, որ երբ ռուսական կորուստների թւերը կը լրացվեն Ցուշունի շրջանի տեղեկութիւնների համաձայն, ռուսների ընդհանուր կորուստը 20,000-ով կաւելանայ։ Ենթադրում են, որ ռուսական բանակի թիւը՝ հաշւելով օժանդակ զօրքերը, առաջիկայ ամիս կը հասնի մօտաւորապէս 130,000-ի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ինֆանտէրիայի գեներալ Լենևիչի հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով մարտի 13-ից 1905 թւի. «Բանակներից տեղեկութիւններ գիշերը չեն ստացվել»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենտրոնական

գրավաճառանոցում վաճառվում են Ատրպետեանի հետևեալ աշխատութիւնները.

Սարրաֆ, ողբերգութիւն հինգ արար. գ. 30 կ.
Շուշան, օպերա երեք արարուածով գ. 1 ր.
Թուլումբազիներ, պատկեր, գ. 10 կ.
Բէրսաի Առաքէլը, գինն է 25 կօպէկ.
Ժառանգներ, գինն է 30 կօպէկ.
Շինոց, պատկեր, գինն է 30 կօպէկ.
Քոռ-Եղիկ, վէպ Շիրակեցիների կեանքից, 30 կ.
Խև Կարապետ, վէպ հայ կաթօլիկների կեանքից, գինն է 1 րուբլի.
Երկերի ժողովածու, հատոր Ա. պատկերներ Թիւրքահայերի կեանքից, գինն է 1 ր.
Երկերի ժողովածու, հատոր Բ. Վիւքեալայի գաղտնիքը վէպ Թիւրքիայի արկածներից,
Դիմել՝ Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ. (հ.) 7—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՁԻԿՕՂԼԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն:

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

. Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1-1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ՍՈԼՕԼՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Պ. Ա. ԱՐԳԱՋԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ:

Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ:

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ.
Երեքշաբթի, մարտի 15-ին

Թիֆլիսի ժողովարանի սիրողների խումբը անդամների, կանդիդատների և [illegible] ընտանիքների համար կը ներկայացնէ՝

Մասնակցութեամբ դերասան Զարիֆեանի

ՍԷՐ ԵՒ ԽԱՐԴԱՒԱՆՔ
Ողբերգ. 4 գործ. 7 պատկ. հեղ. Շիլլերի, թարգմ. Ա. Մովսէսեանի:

Մասնակցում են՝ տ.տ. Մամուլեան, Սօֆիա, պ. պ. Երուանդեան, Զարիֆեան, Կաչկաչեան, Մանկարեան, Սափարեան և Վանչիր:

Տեղերի գինը 1 ր. մինչև 30 կ.

Սկիզբը ճիշդ ժամը 8½-ին երեկոյեան:

2—2 Ռէժիսոր՝ տիկ. Մայսուրեանց

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Մ. Ա. Ստեփանեան
Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելեամինովսկայեա փ. № 8.

Բժիշկ Ա. Մխիթարեանց
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դեղատան կից: (տ. օ.) 35—80

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՂԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.: Կուկիա, Սեմեօնովսկայեա փ. № 20. (ո. կ. ե.) 20—30

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Տեղափոխվելով Թիֆլիսից ՌՈՍՏՈՎ

Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան:

Б. Садовая, 136, д. Бакалова.

(ո. կ. ե. հ.) 92—100

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Ընդունում է յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան: Ռտիշչեվսկի փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմաց. տելեֆօն № 711. (ա. օ.) 4—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Յ. Քարանեան
ընդունում է ներքին եւ ջղային հիւանդութիւններ ունեցողներին առաւօտեան 9—12 ժամը և երեկոյեան 5—7 ժամը:

Վելեամինովսկի փողոց տ. Սաֆարեանի, № 13. III գիմնազիայի կից (կ. ե. հ.) 15—20

Վաճառվում են

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

Երկու նոր աշխատութիւնները

I

ՍԷՐ ԵՒ ԽԱՆԴ (մի պատկերով) 20 կ.

II

ԱՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ և ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ 20 »

Դիմել՝ Թիֆլիսում «Գուտտէնբէրգ» և «Կենտրօնական» գրավաճառանոցները, իսկ Բագւում՝ «Сотрудникъ» գրավաճառանոցը: 23—25

Թիֆլիսի քաղաքային դպրոցներ—I Վէրայի չորսդասեանը, II Երկաթուղային 6 դասեանը և III Նիկոլաեվսկին խնդրում են 4-դ բաժանման (դասարանի) սաների ծնողներին շնորհ բերել նրանց դպրոցները ներկայ մարտի 17-ին, 5-դ բաժանման (դասարանի) 18 ին և 6-դ բաժանմանը (դասարանի)—մարտի 19-ին կէսօրվայ ժամը 4-ին՝ խորհրդակցելու այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ են յիշեալ դպրոցներում կանոնաւորապէս ուսումը շարունակելու համար: 15, 16, 17 1—3

Խաչատուր Վարդանեանցը
33 տարեկան միջահասակ երեք տարուց ի վեր «Սարունչի» լուսանկարչութեամբ էր պարապում, Բագուի աղէտից յետոյ նրա մասին տեղեկութիւն չունենք. դիմում ենք բարեսէր անձանց, որոնք գիտեն նրա մասին թող բարեհաճեն յայտնել «Մշակի» խմբագրութեան: 1—2

Լոյս է տեսել և վաճառվում է

ԽԱԺԱԿ

«ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ»
Գինն է 40 կոպէկ

Դիմել Թիֆլիս—«Գուտտենբէրգ» գրախանութը: Առնուազը 5 հատ ցանկացողը կարող է դիմել հեղինակին, «Մշակ»-ի խմբագրութիւն:

Պատրաստում
և պարապում ենք բոլոր միջնակարգ դպրոցների բոլոր առարկաներից. կարելի է և գիշերօթիկ: Աւչալեան փող., տուն 53, ուսանողներ՝ Հ. և Կ. (ե. հ. կ.) 2—15

Նոր լոյս տեսաւ

Ք. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
մշակած հայկական երգերի

Երկրորդ տետրը

որը պիանոյի համար ներդաշնակել է

ԼԷՕՆԻԴ ԿՆԻՆԱ

Առաջի տետրի գինն է՝ 1 ր., երկրորդի՝ 75 կ., երկու տետրն էլ վաճառվում են Լանկօյի երաժշտական և «Գուտտենբերգի» գրավաճառանոցներում, «Պռօգրեսս» խանութում և հրատարակչի—Ք. Կարա Մուրզայի (ул. Панасевича № 8) մօտ. Նրա մօտ է և պահեստը: 2—10

Ծանուցվում է ի լուր ազգայնոց, թէ Թիֆլիսի սրբազան առաջնորդի նախագահութեամբ կազմված է մի Յանձնաժողով Զխարի հրկիզեալների համար նուիրաբերութիւններ ընդունելու և գործադրելու: Ժողովի անդամներն են՝ տ.տ. իշխանուհի Մ. Թումանեան, Մ. Մզարեուլեան, Վ. Եսայեան, պ.պ. ճարտարապետ Ն. Գրիգորեան, երդ. հաւատարմատարի օգնական Մ. Մնացականեան, բժ. Ն. Կաճկաճեան:

Հրկիզեալներին օգնելու պաշտօնական թոյլտուութիւնն ստացված է Թիֆլիսի պ. նահանգապետից:

Խնդրում ենք նուիրաբերութիւններն ուղարկել Յանձնաժողովի գանձապահ իշխանուհի տ. Մ. Թումանեանին, Բարեատինսկայա, № 8: 2—5

Թ. ԽՍՊԻՐԵԱՆԻ
Ատաղձագործութեան (ստոլեար) արհեստանոցը Երևանից տեղափոխվել է Թիֆլիս, Միքայէլեան փող. № 156. ընդունում է ամեն տեսակ կահկարասիների, պօդեզդի, պատուհանների և փայտի վրա քանդակագործութեան պատուէրներ: Օդէսսայում կատարելագործված արհեստաւոր խնդրում է Թիֆլիսի և եկւոր յարգելի անձանց չը թողնել անուշադիր: Պատրաստի կայ 2 հարուստ գրասեղան: (շ. ե. հ.) 8—10

Լոյս տեսաւ մամուլի տակից

ԱԿՆԱՐԿՆԵՐ ՈՒԴԻԱՑԻ և ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
Գինն է 40 կոպ.

ճանապարհածախսով 50 կոպ.

Դիմել Թիֆլիսում «Գուտտենբէրգ» գրավաճառանոցին, Ս. Ռ. Դովլաթեանին, Ս. Կ. Կաֆիեվին, Յ. Մելիք-Ջանեանցին (Բեհբութեար փողոց), իսկ Սիմֆերոպոլում՝ (Ղրիմ) հեղինակին այսպէս.—Симферополь, священ. Г. Овсепьянъ. Լ. հ. 11—15

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

հեղինակութիւնները.

Նոր տպագրութեամբ, ուղղած եւ լրացրած:

I ՊԵՊՕ

կատակերգութիւն երեք արարուածով, երրորդ տպագրութիւն:

Գինն է 50 կ.

II ԽԱԹԱԲԱԼԱ

կատակերգութիւն չորս արարուածով, երկրորդ տպագրութիւն:

Գինն է 50 կ.

Վաճառվում են Թիֆլիսում՝ Կենտրօնական, Կովկասեան և «Գուտտենբէրգ» գրավաճառանոցներում, և Բագւում տիկին Մ. Սունդուկեանցի գրավաճառանոցում: (չ.հ.շ.) 7—10

Շարունակվում է բաժանորդագրութիւնը

ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ
Նկարազարդ կիսամսեայ հանդէս

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (1904—1905)

Աշխատակցութեամբ Թիֆլիսի, գաւառների և արտասահմանի շատ բժիշկների

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԱՄԵՆ ՏԵՂ

Տարին—2 ր. 50 կոպ. (Արտասահման 8 ֆրանկ).

Կէս տարին—1 ր. 75 կոպ. Երեք ամիսը—1 ր.

Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները իրանց յաւելուածներով:

Առանձին համարները ծախվում են 10 կոպ.

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

Բաժանորդագրական տարին հոկտեմբերից հոկտեմբեր է:

Անցեալ տարվայ մնացած համարները (№ 7 ից մինչև 24) իրանց յաւելուածներով արժեն բաժանորդների համար 1 ռուբլի:

Օտար քաղաքներից դիմում են. Тифлисъ, редакція «Арогджапаик Терт» կամ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ».

Արտասահմանից. Tiflis, Rédaction de la Revue «Arogdjapaik Tert».

1—3 Խմբագիր-հրատարակիչ Դ-ր Վ. Արծրունի

ԴԷՊՕ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Եղբ. Յակոբջանեանցներ եւ Սարգսեանց"
Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայէլեան կամուրջ, Քամոյեանի տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների համար ամենավերջին ամառվայ սեզօնի տարազով պատրաստած հագուստներ:

Գները չափաւոր են և առանց սակարկութեան: (շ. հ.) 26—100

„ԸՂԹԱՅ"
Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

խնդրում է բոլոր կրեդիտօրներին մինչև մարտի 15-ը ներկայացնել Ընկերութեան Վարչութեանը, Թիֆլիս քաղաքում (Վելեամինովսկի փողոց, տուն Խանկալամեանի), հաշիւները և դօկումենտները՝ վերջնական հաշիւը կտրելու համար: (4, 9, 15) 3—3



Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան

ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵՒ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխօդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԱՒ վաճառատներում:

ФАБРИЧНОЕ КЛЕЙМО

С.ПЕТЕРБУРГЪ

Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա:

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԷԼԷՐ"
Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար

մեծ քանակութեամբ ռուսական եւ արտասահմանեան

արդիւնագործութեան

ԿԱՃՈՒԵՂԷՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ
Տելեֆօն № 346. 81—41 Երևանեան հրապարակի վրա:

ԾԱՂԿԻՕ-ԴԸ-ԿՕԼՕՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
հնարածը, մրցութիւնից բարձր յատկութիւնով

Grant Prix

Պարիզի 1900 թւի ամենաբարձր գինը:

5—1905—10 9—10

Дозволено цензурою. Тифлисъ, 14-го Марта 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. №15